

Մ Ա Ս II

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

ՄԱՍ II-Ա

Մակրոտնտեսական կանխատեսումներ և վերլուծություն

3.1 Ներածություն

Տարեկան բյուջետային ծրագրի այս հատվածը ներկայացնում է ընթացիկ տնտեսական իրավիճակը հանրապետությունում, ինչպես նաև 2013 թվականի մակրոտնտեսական հեռանկարները:

Տնտեսական կանխատեսումների նպատակը

Հայաստանի տնտեսության իրավիճակի կանխատեսումները կարևոր են մի քանի պատճառներով: Նախ՝ տնտեսական աճ ապահովող արդյունավետ տնտեսության առկայությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եկամուտների ավելացումը ինքնին շատ կարևոր նպատակ են Հայաստանի Հանրապետության կառավարության համար: Այդ նպատակները նաև Կառավարության Գործունեության Ծրագրի բաղադրիչներն են: Մակրոտնտեսական կանխատեսումները ոչ միայն տեղեկատվություն են տալիս, թե որքանով են վերը նշված նպատակները իրագործվելու, այլ նաև ապահովում են ընդհանուր տնտեսական միջավայրի վերաբերյալ պատկերացումներ, ինչը կարևոր է կառավարության ռազմավարության և քաղաքականության այլ ասպեկտների ձևավորման համար: Այլ կերպ ասած մակրոտնտեսական կանխատեսումները հիմք են տալիս պատկերացում ունենալ այն իրական միջավայրի մասին, որի պայմաններում գործելու է կառավարությունը: Ընդ որում,

մակրոտնտեսական ապագա զարգացումների համատեքստում է ուրվագծվում կառավարության քաղաքականության հակացիկլային բնույթը: Ընդունված կանոն է, որ տնտեսական անկումների ժամանակ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի ընդլայնող՝ պակասուրդի մեծացման միջոցով ավելի շատ ծախսերի իրականացում քան եկամուտների հավաքագրում և հակառակ վարքագիծը՝ տնտեսական վերելքների ժամանակահատվածում:

Տնտեսական կանխատեսումների իրականացման երկրորդ կարևոր հիմնավորումն այն է, որ ազգային տնտեսության իրավիճակը մեծ ազդեցություն ունի կառավարության ֆինանսական ռեսուրսների վրա: Տնտեսական բարձր աճն ապահովում է գործարարների ավելի մեծ եկամուտներ, որոնք իրենց հերթին կառավարության համար ապահովում են ավելի մեծ հարկային եկամուտներ: Եվ հակառակը, տնտեսական աճի ցածր մակարդակը բերում է հարկերի ավելի ցածր մակարդակի և կառավարության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության և օժանդակության ավելի մեծ պահանջարկի: Մակրոտնտեսական կանխատեսումները նաև հիմք են հանդիսանում ապագայում բյուջեի վրա հնարավոր ծանրաբեռնվածության մեծացման հետ կապված ռիսկերի գնահատման համար:

Տնտեսության նկարագրություն

Տնտեսությունը կարելի է նկարագրել հետևյալ վեց հիմնական բնութագրիչներով.

- Համախառն առաջարկ (չափվում է, տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքներով, իսկ վերջիններիս իրական աճերը բնութագրում են համախառն ներքին արդյունքի (<ՆԱ) իրական աճը),

- Համախառն պահանջարկ (չափվում է, պետական, մասնավոր հատվածների և արտաքին աշխարհի կողմից ապրանքների և ծառայությունների վրա կատարվող ծախսումներով, սպառում/<ՆԱ, ներդրում/<ՆԱ, զուտ արտահանում/<ՆԱ),

- Գնային փոփոխականներ (<ՆԱ դեֆլյատոր, որն իրենից ներկայացնում է տնտեսությունում ստեղծված <ՆԱ-ի գների փոփոխությունը և գնաճ, որը չափվում է սպառողական գների (ներառյալ սպառողական ներմուծված ապրանքների գները) ինդեքսի փոփոխությամբ (ՍԳԻ)),

- Ֆինանսական համակարգի խորություն (չափվում է հետևյալ փոփոխականներով՝ Փողի ագրեգատներ/<ՆԱ, վարկեր/<ՆԱ, ավանդներ/<ՆԱ, ցույց է տալիս թե բանկային համակարգը որքանով է ներգրավված երկրի տնտեսական կյանքում),

- Արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերություններ (չափվում է հիմնականում երկրի ընթացիկ հաշվի հաշվեկշռով և դրա տարրերով՝ արտահանում, ներմուծում, տրանսֆերտներ, գործոնային եկամուտներ),

- Պետական հատվածի դիրքը տնտեսությունում (չափվում է հիմնականում պետական հատվածի ծախսերի, եկամուտների ծավալով և դրանց տարբերությամբ, պետական ծախսեր/ՀՆԱ, հարկային եկամուտներ/ՀՆԱ, պակասուրդ (հավելուրդ)/ՀՆԱ):

Աղյուսակ 3.1-ում ներկայացված է տնտեսության ներկա իրավիճակի հակիրճ նկարագրությունը՝ ըստ վերը նշված վեց գլխավոր տնտեսական բնութագրիչների: ՀՀ կառավարության բյուջետային ուղերձի այս հատվածում նկարագրված են նաև այն հիմնական գործոններն ու միտումները, որոնք պայմանավորում են աղյուսակ 3.1-ում նշված ցուցանիշերը և տնտեսության զարգացման հեռանկարները:

Աղյուսակ 3.1 ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ

Չափորոշիչ	2009	2010	2011	2012	2013
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Սպասում	Կանխատեսում
Տնտեսական աճ (ՀՆԱ % փոփոխություն)	-14.1	2.2	4.7	7.1	6.2
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	34.7	32.9	27.9	26.3	26.9
Սպառման մակարդակ (Սպառում/ՀՆԱ %)	93.7	95.1	96.6	97.0	96.5
ՀՆԱ դեֆլյատոր	102.6	107.8	104.2	102.3	103.2
Գնաճ միջին	3.4	8.2	7.7	2.4	4.2
Գնաճ 12-ամսյա	6.5	9.4	4.7	4.0	4.0
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ %	-7.6	-5.0	-2.8	-2.8	-2.6
Բանկային համակարգի ներգրավվածություն (փողի	25.9	26.3	29.8	32.1	34

զանգված/ՀՆԱ %)					
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ %	-15.8	-14.8	-10.9	-10.7	-9.2

3.2 Համախառն առաջարկ

Ինչպես արդեն նշել ենք, երկրում համախառն առաջարկն չափվում է տնտեսության առանձին ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների հանրագումարով, որի իրական արտահայտությամբ փոփոխությունն էլ նախորդ տարվա համեմատ գնահատվում է ՀՆԱ-ի իրական աճի միջոցով: Ուստի այս բաժնում կներկայացվի տնտեսության հիմնական ճյուղերում ստեղծված ավելացված արժեքների փոփոխության դինամիկան վերջին տարիներին և ապագա ակնկալվող զարգացումները:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո թեև տնտեսական աճի տեմպերը զիջում են մինչճգնաժամային աճի տեմպերին, սակայն երկրի տնտեսական աճի կառուցվածքում տեղի ունեցան որակական տեղաշարժեր ի օգուտ ավելի արտադրողական ճյուղերի, որի պարագայում աճին նպաստող առաջնորդող ճյուղ սկսեց հանդես գալ նաև արդյունաբերությունը:

2010 թվականից տնտեսությունը սկսեց վերականգնվել ունենալով ՀՆԱ-ի փոքր աճ, իսկ 2011 թվականին այդ վերականգնումը շարունակվեց և ՀՆԱ-ն՝ իրական արտահայտությամբ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճեց 4.7 տոկոսով: Ընդ որում, տնտեսական վերականգման վրա դրական անդրադարձավ կառավարության հակաճգնաժամային փաթեթի ազդեցությունը, արտաքին բարենպաստ միջավայրը՝ ի դեմս մետաղների բարձր գների և գործընկեր երկրների տնտեսությունների վերականգնման, ինչպես նաև 2011 թվականին գյուղատնտեսության ոլորտում կառավարության հակաճնաճային քայլերը՝ տարբեր ծրագրերով խթանվեց գույժերքների արտադրությունը:

2011 թվականին աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում՝ բացառությամբ շինարարության¹: Նշված ժամանակահատվածում գյուղատնտեսության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.3 տոկոսային կետը, իսկ իրական աճը կազմել է 13.6 տոկոս, արդյունաբերության հաշվին ապահովվել է տնտեսական աճի 2.1 տոկոսային կետը՝ 13.5 տոկոս իրական աճի

¹ Սույն պարբերության ցուցանիշները վերաբերում են տնտեսության ճյուղերում ստեղծված ավելացված արժեքին:

պայմաններում: Ծառայությունները ևս աճել են 5 տոկոսով, 2.0 տոկոսային կետով դրական նպաստում ունենալով տնտեսական աճին: Շինարարությունը նվազել է 12.5 տոկոսով՝ 2.2 տոկոսային կետով բացասական նպաստում ունենալով տնտեսական աճին:

Շարունակելով 2011թ.-ի տնտեսական վերականգնման միտումը, 2012 թվականի հունվար-հուլիսին գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (SUS)² աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ցուցանիշն աճել է 7.7 տոկոսով: Ընդ որում, տնտեսական ակտիվությանը նպաստել են բոլոր ճյուղերը՝ բացառությամբ շինարարության, իսկ ամենամեծ նպաստումն են ունեցել ծառայությունների (3.3 տոկոսային կետ³) և արդյունաբերության (2.4 տոկոսային կետ) ճյուղերի համախառն թողարկումների իրական աճերը: Դրական նպաստում են ունեցել նաև գյուղատնտեսության (2.3 տոկոսային կետ) և առևտրի (0.4 տոկոսային կետ) ճյուղերը, իսկ շինարարության բացասական նպաստումը կազմել է 0.7 տոկոսային կետ:

Կանխատեսում: 2012 թվականի յոթ ամիսների դրական զարգացումները և համաշխարհային տնտեսությունում աճի կանխատեսումները հիմք են հանդիսացել 2012 թվականի տնտեսական աճի տեմպի (7.1 տոկոս) կանխատեսման համար: Ակնկալվում է, որ կշարունակեն աճել արտերկրից եկող դրամական փոխանցումները՝ պայմանավորված հիմնականում Ռուսաստանի տնտեսության ակնկալվող զարգացումներով: Արդյունքում, 2013 թվականի համար իրական ՀՆԱ-ի աճը կանխատեսվում է փոքր ինչ ցածր՝ 2012թ-ի համեմատությամբ, 6.2 տոկոսի չափով, որին հիմնականում կնպաստեն ծառայությունների և արդյունաբերության ճյուղերի աճերը:

Աղյուսակ 3.2.1. Տնտեսության ճյուղերի իրական աճերը 2009-2012թթ. (ավելացված արժեքով)


	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.

² 2011 թվականից ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ամսական ՀՆԱ-ից անցում է կատարել SUS-ի հաշվարկմանը: Ի տարբերություն Ազգային հաշիվների մեթոդաբանությամբ հաշվարկվող ՀՆԱ ցուցանիշի (որն ունի եռամսյակային և տարեկան պարբերականություն) ամսական SUS-ը բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների փոփոխությունը, այլ ոչ թե ավելացված արժեքի փոփոխությունը: Բացի այդ, ամսական SUS-ը չի ընդգրկում արտադրանքի զուտ հարկերը և ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունները (ՖՄԱԶԾ), որոնք ներառվում են եռամսյակային և տարեկան ՀՆԱ-ի արտադրական եղանակով հաշվարկներում:

³ SUS-ի աճին ճյուղերի նպաստումները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

Արդյունաբերություն	-6.9	9.2	13.5	9.4	9.2
Գյուղատնտեսություն	6.0	-16.0	13.6	7.9	4.5
Շինարարություն	-41.6	3.3	-12.5	2.2	3.5
Ծառայություններ	-3.3	4.1	5.0	6.4	6.2
Արտադրանքի հարկեր (հանած սուբսիդիաներ)	-22.5	13.4	4.3	10.0	8.0
Ընդամենը ՀՆԱ	-14.1	2.2	4.7	7.1	6.2

Գծապատկեր 3.2.1-ում ներկայացված են տնտեսության առանձին ճյուղերում արձանագրված և կանխատեսվող ՀՆԱ-ի իրական աճին նպաստման չափերը:



3.2.1 Արդյունաբերություն⁴

2009 թվականի տարեսկզբին արդյունաբերության ճյուղը զգալի անկումից հետո տարվա երկրորդ կեսին՝ միջազգային շուկայում մետաղների գների աճի և կառավարության համակարգված հակացիկլային քաղաքականության արդյունքում, աստիճանաբար վերականգնվեց: 2010 թվականին աճի միտումը արագացավ, իսկ 2011թվականին պահպանվեց և ճյուղում արձանագրվեց ավելացված արժեքի 13.5% իրական աճ:

⁴ Այս բաժնում ներկայացված են ճյուղի թողարկման ծավալների ցուցանիշները, որոնք տարբերվում են ճյուղի ավելացված արժեքները բնութագրող ցուցանիշներից:

2012 թվականի հունվար-հուլիս ամիսներին արձանագրվել է արդյունաբերական արտադրանքի համախառն թողարկման ծավալների 13.4 տոկոս աճ: «Հանքագործական արդյունաբերության», «Մշակող արդյունաբերության», «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» և «Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ենթաճյուղերի թողարկումներն իրական արտահայտությամբ աճել են համապատասխանաբար՝ 16.1%, 13.9%, 34% և 7.1%-ով: Նշենք նաև, որ հանքագործական արդյունաբերության աճը պայմանավորված է եղել ճյուղի մրցունակության բարելավումով:

Մշակող արդյունաբերության աճին նպաստել են խմիչքների արտադրության (39%), սննդամթերքի արտադրության (10.3%), հիմնային մետաղների արտադրության (10.7%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության (8.7%) և ծխախոտային արտադրատեսակների արտադրության (51.8%) աճերը: Սննդամթերքի արտադրության աճը պայմանավորված է ինչպես հասարակության տնօրինվող եկամտի, այնպես էլ արտահանման ծավալների աճով: Էլեկտրաէներգիայի արտադրության աճը պայմանավորվել է ՋԷԿ-երի կողմից արտադրված էլեկտրաէներգիայի աճով՝ 39%:

Կանխատեսում: Ակնկալվում է, որ արդյունաբերության ճյուղում տարվա առաջին յոթ ամիսների տնտեսական ակտիվությունը կպահպանվի մինչև տարեվերջ և 2012 թվականի տարեկան աճը կկազմի 9.4 տոկոս՝ պայմանավորված ինչպես արտաքին պահանջարկով⁵, այնպես էլ տնօրինվող եկամտի աճի արդյունքում ներքին պահանջարկի աճով: Նշված միտումները կպահպանվեն նաև 2013 թվականին, որի արդյունքում ակնկալվում է ճյուղի ավելացված արժեքի շուրջ 9.2 տոկոսանոց աճ: Վերջինիս կնպաստի նաև ճյուղում ներդրումների խրախուսմանը միտված կառավարության քաղաքականությունը⁶, ինչպես նաև արտաքին պահանջարկի կանխատեսվող աճը:

3.2.2 Գյուղատնտեսություն

2009 թվականին գյուղատնտեսությունն իրական աճ արձանագրած միակ ճյուղն է եղել (6 տոկոս), որը սակայն 2010 թվականին խոշոր անկում արձանագրեց, պայմանավորված գերազանցապես անբարենպաստ բնակլիմայական պայմանների ազդեցության արդյունքում բուսաբուծության համախառն արտադրանքի նվազմամբ: 2011 թվականին ճյուղը սկսեց վերականգնվել և բարենպաստ բնակլիմայական պայմանների և կառավարության կողմից ձեռնարկված գյուղատնտեսության առաջարկին օժանդակող մի շարք ծրագրերի արագ իրագործման արդյունքում աճեց 13.6 %-ով:

⁵ 2012թ արդյունաբերության արտադրանքի թողարկման մեջ արտահանման մասնաբաժինը պահպանվել է նախորդ տարվա մակարդակի վրա, սակայն իրացման որոշ մասը տեղափոխվել է ԱՊՀ շուկաներ:

⁶ Ներմուծվող սարքավորումների և արտադրական հոսքագծերի համար վճարման ենթակա ԱԱՀ-ն հետաձգվում է:

2012 թվականի հունվար-հուլիսին գյուղատնտեսության համախառն թողարկումն իրական արտահայտությամբ աճել է՝ 10.4 տոկոսով⁷, որին հիմնականում նպաստել է բուսաբուծության 23.4% աճը: Անասնաբուծության արտադրությունում ևս գրանցվել է իրական ծավալի աճ(2.1%), որը պայմանավորված է սպանդի համար իրացված անասունի և թռչնի, կաթի ու ձվի արտադրության ենթաճյուղերի համապատասխանաբար՝ 0.3%, 2.3% և 2.4% աճերով: Իրական ծավալի 21% աճ է արձանագրվել նաև ձկնորսության և ձկնաբուծության ենթաճյուղում:

Կանխատեսում: Հաշվի առնելով ընթացիկ տարվա յոթ ամիսների զարգացումները, , ինչպես նաև հաշվարկման բարձր բազան⁸, գնահատվում է, որ տարեվերջին գյուղատնտեսության իրական աճը կլինի շուրջ 7.9%, որը հիմնականում կապահովվի բուսաբուծության հաշվին:

2013 թվականին ճյուղի աճը կկազմի 4.5 տոկոս, որի համար հիմք կհանդիսանան ճյուղի զարգացմանն ուղղված պետական կարգավորման քաղաքականությունը եւ նախորդ տարիներին դրսևորած զարգացման միտումները:

3.2.3 Շինարարություն

2009 թվականին 41.6 տոկոս իրական անկումից հետո շինարարության ճյուղը դեռևս չի վերականգնվել: Չնայած 2010 թվականին արձանագրված փոքր աճին 2011 թվականին նույնպես նախորդ տարվա համեմատ շինարարության ծավալները կրճատվել են 11.5 տոկոսով, ինչի պատճառներ են հանդիսացել բնակչության և կազմակերպությունների միջոցների ֆինանսավորմամբ իրականացվող շինարարության ծավալների համապատասխանաբար 30.5 և 13.5 տոկոս կրճատումը:

2012 թվականի հունվար-հուլիսին ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված շինարարության ծավալներն իրական արտահայտությամբ նվազել են 5.2 տոկոսով: Ընդ որում, հաշվետու ժամանակաշրջանում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել են մարդասիրական օգնության և կազմակերպությունների, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող շինարարության իրական ծավալները՝ բացասական նպաստում ունենալով շինարարության իրական ծավալի ինդեքսին (համապատասխանաբար՝ 6.8, 4.5 և 1.1 տոկոսային կետ), մինչդեռ բնակչության, համայնքների և միջազգային վարկերի միջոցների հաշվին իրականացված

⁷ Ենթաճյուղերի համախառն թողարկումների իրական աճերի և նպաստումների կուտակային ցուցանիշներն այս և հաջորդ ճյուղերի համար հաշվարկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից՝ ՀՀ ԱՎԾ ամսական ցուցանիշների պաշտոնական հրապարակումների հիման վրա:


⁸ 2011թվականի հուլիսին գյուղատնտեսության աճը կազմել է 11.7%

շինարարության ծավալները դրական նպաստում են ունեցել (համապատասխանաբար՝ 5.1, 1.5, 0.7 տոկոսային կետ):

Հատկանշական է, որ չնայած շինարարության համախառն թողարկումը նվազել է, սակայն 2012 թվականի հունվար-հունիսի տվյալներով գրանցվել է շինարարության ավելացված արժեքի 1.8 տոկոսու իրական աճ: Ինչը պայմանավորված է հիմնականում շինմոնտաժային աշխատանքների տեսակակար կշռի մեծացմամբ, որը կազմել է 94.4 նախորդ տարվա նկատմամբ աճելով 7.8 տոկոսային կետով:

Ըստ տնտեսության ճյուղերի շինարարությունը հիմնականում ուղղված է եղել անշարժ գույքի հետ կապված գործառնություններին և տրանսպորտին, որոնց բաժինը շինարարության ծավալներում կազմել է համապատասխանաբար՝ 28.2% և 13.1%: և տեսակարար կշիռները համապատասխանաբար աճել են 0.7 և 7.3 տոկոսային կետով: (տե՛ս Գծապատկեր 3.2.2):

Գծապատկեր 3.2.2 Շինարարության կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի 2011-2012թթ. հունվար-հուլիսին



Կանխատեսում: Ընթացիկ զարգացումներին համապատասխան շինարարության ճյուղում ավելացված արժեքի աճ կգրանցվի՝ շուրջ 2.2 տոկոսի: 2013 թվականին կանխատեսվում է, որ ճյուղում կարձանագրվի 3.5 տոկոս աճ, որը հիմնականում պայմանավորված կլինի ավելի արտադրողական ներդրումներով:

3.2.4 Ծառայություններ և առևտուր

2009 թվականի ճգնաժամի պայմաններում տնտեսության այս ճյուղը աննշան անկում ունեցավ՝ 3.3%, իսկ 2010 թվականից սկսեց վերականգնվել: 2011 թվականին ծառայությունների ոլորտի աճի միտումները պահպանվեցին՝ գրանցելով 5.0% իրական աճ՝ պայմանավորված հիմնականում ֆինանսական միջնորդության, առևտրի և կրթության ենթաճյուղերի աճերով համապատասխանաբար՝ 2.1, 1.4 և 0.8 %:

2012 թվականի անցած յոթ ամիսների տվյալներով ճյուղը հանդիսացել է տնտեսական աճի հիմնական շարժիչ ուժերից մեկը: Նշված ժամանակաշրջանում մատուցված ծառայությունների ծավալն իրական արտահայտությամբ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, աճել է 11.0%-ով, որին հիմնականում նպաստել են ֆինանսական և ապահովագրական գործունեության ծառայությունների աճը (նպաստումը կազմել է 4.9 տոկոսային կետ): Ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել ֆինանսական և ապահովագրական գործունեության (25.4%), տեղեկատվության և կապի (21.4%), տրանսպորտի (19.1%) ծառայությունները:

2012 թվականի հունվար-հուլիսին առևտրի շրջանառությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ համադրելի գներով, աճել է 2.9%-ով, որին նպաստել են թե մանրածախ, թե մեծածախ առևտրի աճը (յուրաքանչյուրը 1.2 տոկոսային կետ): Առևտրի ծավալների իրական արտահայտությամբ աճը պայմանավորված է հիմնականում մասնավոր հատվածի տնօրինվող եկամտի աճով:

Կանխատեսում: 2012 թվականին կանխատեսվում է, որ ճյուղի ավելացված արժեքի աճը կկազմի շուրջ 6.4 %: Իսկ 2013 թվականին՝ պայմանավորված տնտեսության այլ ճյուղերի համահունչ զարգացման վարքագծով, ճյուղի աճը կկազմի շուրջ 6.2 %: Այլ կերպ ասած, ծառայությունների ոլորտում ակնկալվում է իր նախորդ տարիների միտումներին համապատասխան աճի ցուցանիշներ:

3.2.5. Աշխատանքի շուկա: Գործազրկության մակարդակը 2009 թվականին աճել է՝ պայմանավորված ֆինանսատնտեսական ճգնաժամով՝ կազմելով 18.4⁹ %: Տնտեսության վերականգնմանը զուգընթաց գործազրկության մակարդակը նվազել է 2011թ արդյունքներով հասնելով 2009 թվականի համեմատ 0.3 տոկոսային կետով ցածր մակարդակի:

⁹ Ցուցանիշը ներկայացվում է հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ձ ազգային վիճակագրական ծառայությունը 2012թ. փետրվարից դադարեցրել է աշխատանքի շուկայի վիճակագրական ցուցանիշների (գբաղվածություն, գործազրկության մակարդակ, տնտեսապես ակտիվ բնակչություն, տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն, աշխատանքային ռեսուրսներ) հաշվարկն ըստ վարչական աղբյուրներից ստացվող տեղեկատվության և հիմնվում է բացառապես աշխատուժի հետազոտության արդյունքների վրա, որը 2007թ.-ից իրականացվում է տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության վրա:

2012 թվականի ընթացքում պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը հունվար-հուլիս ժամանակահատվածում տարեսկզբի համեմատ նվազել է 2.3 հազ.մարդով՝ կազմելով՝ 66.2 հազ.մարդ:

2012 թվականի հունվար-հուլիսին միջին ամսական անվանական աշխատավարձը 2011 թվականի նույն ժամանակահատվածում գրանցված ցուցանիշի նկատմամբ աճել է 4.6%-ով¹⁰, ինչը պայմանավորված է տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի աշխուժացմամբ (բացառությամբ շինարարության): Բյուջետային հատվածի աշխատավարձի աճը կազմել է 4.2%, իսկ մասնավոր հատվածի աճը 4.6%: Ընթացիկ տարվա անցած յոթ ամիսներին տնտեսության պետական և ոչ պետական հատվածներում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է համապատասխանաբար՝ 93903 և 143985 դրամ, իսկ միջին աշխատավարձը՝ 116928 դրամ: Իրական աշխատավարձը հաշվետու ժամանակաշրջանում աճել է 2.3 տոկոսով:

Կանխատեսում: 2012 թվականին տնտեսական ակտիվության աճին զուգընթաց կանխատեսվում է գործազրկության մակարդակի աստիճանական նվազում, որը կպահպանվի նաեւ 2013 թվականին: Հաշվի առնելով կանխատեսվող տնտեսական աճի կառուցվածքը, այն կապահովվի տնտեսության ճյուղերի կողմից նոր աշխատուժ ներգրավելու հաշվին: Ընդ որում, գործազրկության անկումը համեստ կլինի, քանի որ կուղեկցվի աշխատանքի արդյունավետության (արտադրողականության) բարձրացմամբ:

Աղյուսակ 3.2.2 Գործազրկության մակարդակի դինամիկան 2009-2013թթ.

	2009	2010	2011	2012	2013
	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Սպաս.	Կանխ
Գործազրկության մակարդակ	18.7	19.0	18.4	18.3	18.2

3.3 Համախառն պահանջարկ

Համախառն պահանջարկը հիմնականում պատկերացում է տալիս տնտեսությունում ստեղծված եկամուտների ծախսման ուղղությունների վերաբերյալ: Համախառն պահանջարկը կազմված է ներքին

¹⁰ 2011թ. ցուցանիշը նախնական է: Ներառված չեն փոքր և գերփոքր կազմակերպությունների ցուցանիշները:

և արտաքին պահանջարկներից: Ներքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս, թե ձևավորված եկամուտներն ուղղակի սպառմանն են ուղղվելու, թե ներդրվելու են տնտեսության մեջ: Նշվածը հիմնականում բնութագրվում է պետական և մասնավոր հատվածների կողմից ստեղծված ընդհանուր եկամտում սպառման բաղադրիչներով, սպառում/ՀՆԱ, ներդրում/ՀՆԱ: Իսկ արտաքին պահանջարկը տեղեկատվություն է տալիս գործընկեր երկրների կողմից մեր ապրանքների և ծառայությունների վրա կատարված ծախսումների մասին, որը բնութագրվում է զուտ արտահանման ցուցանիշով:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառում: Ճգնաժամային՝ 2009 թվականին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ նվազել է ընդամենը 4%-ով, 14.1% տնտեսական անկման պայմաններում, ինչը պայմանավորված է հարստության էֆեկտով¹¹: 2010 թվականից սկսած վերջնական սպառման ցուցանիշը սկսել է աճել, ընդ որում, 2010 թվականին առաջանցիկ է աճել տնօրինվող եկամտի իրական աճի համեմատ իսկ 2011 թվականին աճել է 3.4 տոկոս՝ տնօրինվող իրական եկամտի 5.5 տոկոսու աճի պայմաններում, ինչը նշանակում է, որ տեղի է ունեցել խնայողությունների աճ, որը ապագա ներդրումների համար ներուժ է հանդիսանում: Զուգահեռաբար սպառման տեսակարար կշիռները ՀՆԱ-ում 2009 թվականի համեմատ մնացել են գրեթե անփոփոխ:

2012 թվականի վեց ամիսներին վերջնական սպառումն իրական արտահայտությամբ աճել է 5.6¹² տոկոսով, որը պայմանավորված է հիմնականում մասնավոր սպառման շուրջ 6.8 տոկոս աճով, իսկ պետական սպառումը նվազել է 2.4 տոկոսով: Վերջնական սպառման կառուցվածքում պետական և մասնավոր սպառման տեսակարար կշիռները 2012 թվականի նույն ժամանակահատվածում կազմել են համապատասխանաբար 13.1 և 86.9 տոկոս:

Կանխատեսում: Ընթացիկ տարվա զարգացումներով պայմանավորված սպառման աճը մինչև տարեվերջ կկազմի 6.0 տոկոս, որը բարձր է նախորդ տարվա ցուցանիշից: Սպառման նման վարքագիծը հիմնականում բացատրվում է տարվա սկզբին՝ նախորդ տարվա համեմատ, արձանագրված ցածր սպառողական գների պայմաններում սպառողների տնօրինվող եկամուտների աճով, ինչպես նաև

¹¹ Տնօրինվող եկամտի նվազման դեպքում սպառման վարքագիծը եկամուտներին համարժեք չի կրճատվում՝ ի հաշիվ նախորդ տարիների ընթացքում ձևավորված խնայողությունների:

¹² Սպառման ներկայացված իրական աճը ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականն է:

սպառողների վստահության վերականգնմամբ: 2013 թվականին ակնկալվում է, որ սպառողների վստահության վերականգնումը կշարունակվի, որի պայմաններում կարճանագրվի սպառման՝ 5.0¹³ տոկոսանոց աճ:

Կապիտալ ներդրումներ: 2009 թվականին իրական կապիտալ ներդրումները կրճատվել են 30.9%-ով, ի հաշիվ մասնավոր ներդրումների 37.4 % իրական նվազման, որը մեծամասամբ պայմանավորված է եղել շինարարության ճյուղի զգալի կրճատմամբ, իսկ վերջինս կրել է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Պետական կապիտալ ներդրումները նույն ժամանակահատվածում աճել են շուրջ 11.5 %-ով, պայմանավորված կառավարության ընդլայնող տնտեսական քաղաքականությամբ: 2010 թվականին տնտեսական զարգացումների նկատմամբ մասնավոր հատվածի լավատեսական սպասումների աստիճանական վերականգնման զուգընթաց, իրական կապիտալ ներդրումներն աննշան աճել են: Սակայն 2011 թվականին իրական կապիտալ ներդրումները նվազել են 4.7%-ով: Նվազել են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածի ներդրումները՝ համապատասխանաբար 3.8 եւ 4.9%-ով: Պետական հատվածի ներդրումների նվազումը հետևանք է կառավարության կողմից որդեգրած՝ «Ելքի Ռազմավարության», որի ներքո պետական ֆինանսների և պարտքի կայունության ապահովման համար պետք է կատարվի 2009թ.-ին ձևավորված բյուջեի բարձր պակասուրդի աստիճանական կրճատում: Մի բան, որը հաջողվում է Հայաստանում՝ ի տարբերություն շատ երկրների:

2012 թվականի վեց ամիսներին կապիտալ ներդրումներն իրական արտահայտությամբ կրճատվել են (շուրջ 4.6 տոկոս¹⁴)՝ պայմանավորված հիմնականում պետական ներդրումների կրճատմամբ: Մասնավոր ներդրումները աճել են՝ պայմանավորված շինարարության ոլորտում իրականացվող ներդրումների ավելացմամբ:

Կանխատեսում: Հաշվի առնելով 2012 թվականի զարգացումները ակնկալվում է, որ ներդրումները կաճեն 3.4 տոկոսով, որը պայմանավորված կլինի հիմնականում մասնավոր ներդրումների 5.6 տոկոս աճով, այդ թվում պետական ներդրումները կնվազեն 6.8 տոկոսով: 2013 թվականին շինարարության դրական աճի և ներդրումային միջավայրի ակնկալվող բարելավման արդյունքում կանխատեսվում է կապիտալ ներդրումների 8.7 տոկոս աճ, ընդ որում՝ կաճեն ինչպես պետական, այնպես էլ մասնավոր

¹³ 2013 թվականին գործատուների կողմից սոցիալական ապահովության վճարների պետական ծառայողների աշխատավարձերին փոխանցելու վերաբերյալ օրենսդրական փոփոխության արդյունքում սպառման մեջ պետական սպառման աճի ցուցանիշը համադրելի չէ հարկաբյուջետային հատվածի ցուցանիշների հետ և չունի մակրոտնտեսական ազդեցություն ամբողջական պահանջարկի համեմատական ցուցանիշների վրա

¹⁴ Այս հատվածում բերված ցուցանիշները ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականներն են:

ներդրումները և համապատասխանաբար կկազմեն 25.5 և 5.4 տոկոս աճ: Ակնկալվում է, որ կապիտալ ներդրումներում մասնավոր հատվածի կողմից ներդրումները կլինեն հիմնականում արտադրողական բնույթի՝ նպաստելով հետագա տարիներին արտադրողականության աճին և շարունակելով այն կառուցվածքային տեղաշարժը, որն սկսվել է ճգնաժամից հետո:

Զուտ արտահանում:¹⁵ 2009 թվականին արտահանման ծավալները կրճատվել են 10.4 %-ով, իսկ ներմուծումը՝ 19.2%-ով: Չնայած ազգային արժույթի արժեզրկմանը, այս ցուցանիշները պայմանավորված են արտահանվող ապրանքների նկատմամբ համաշխարհային պահանջարկի նվազմամբ և փոխարժեքի ազդեցության դրսևորման ժամանակային խզմամբ: 2010 թվականին արտահանման և ներմուծման ծավալները սկսել են աճել: 2011 թվականին արտահանման ծավալները նույնպես աճել են և կազմել 14.9%, սակայն ներմուծումը իրական արտահայտությամբ նվազել է 2.3 %-ով: Արտահանման ծավալների ավելացումը պայմանավորված էր համաշխարհային տնտեսությունում պահանջարկի աստիճանական վերականգնմամբ, արտահանվող ապրանքների գնային մրցունակության բարձրացմամբ¹⁶, ինչպես նաև նախորդ տարիներին կառավարության հակաճգնաժամային գործողությունների շրջանակներում արտահանողներին ցուցաբերած օժանդակությամբ: Իսկ ներմուծման կրճատումը պայմանավորված էր ներմուծվող ապրանքների բարձր գներով:

2012 թվականի վեց ամիսներին արտահանման ծավալները աճել են 19.1 %-ով, պայմանավորված թե՛ համաշխարհային տնտեսությունում պահանջարկի վերականգնմամբ և թե՛ արտահանողներին ցուցաբերված օժանդակությամբ, իսկ ապրանքների և ծառայությունների ներմուծումը աճել է 5.0 %-ով:

Կանխատեսում: Համահունչ լինելով ինչպես տնտեսության ներքին զարգացումներին, այնպես էլ ճգնաժամից հետո վերականգնվող համաշխարհային պահանջարկին կունենանք արտահանման շուրջ 15.3 տոկոսանոց աճ: Իսկ ներմուծումը իրական արտահայտությամբ կավելանա 7 տոկոսով՝ պայմանավորված ինչպես տնօրինվող եկամտի աճով, այնպես էլ ներմուծման գների աճի տեմպի սպասվող դանդաղումով: 2013 թվականին նշված միտումները կպահպանվեն և կկայունանան, որի արդյունքում կանխատեսվում է արտահանման ծավալների 12.9 տոկոս աճ, իսկ ներմուծման 7.4 տոկոս աճով:

Աղյուսակ 3.3.1 ՀՆԱ-ի ծախսային բաղադրիչների իրական աճերը, %

¹⁵ Այս բաժնում ներկայացված են արտահանման և ներմուծման իրական աճի ցուցանիշները դրամային արտահայտությամբ:

¹⁶ Գնային մրցունակությունը բնութագրվում է իրական փոխարժեքով, երբ արժեզրկվում է, այլ հավասար պայմաններում ասում են, որ երկրի արտահանողները գտնվում են բարենպաստ գնային մրցունակության պայմաններում և հակառակը:

	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.
Սպառում	-4.0	3.9	3.4	6.0	5.0
Ներդրում	-30.9	0.5	-4.7	3.4	8.7
Արտահանում	-10.4	26.5	14.9	15.3	12.9
Ներմուծում	-19.5	12.8	-2.3	7.0	7.4
Ընդամենը ՀՆԱ	-14.1	2.2	4.7	7.1	6.2

ՀՆԱ-ի ծախսային կառուցվածքում 2013 թվականին կանխատեսվում է սպառման մասնաբաժնի կրճատում, որը փոխհատուցվում է զուտ արտահանման աճով: Սա պայմանավորված է սպառման նախաճգնաժամային մակարդակի վերականգնմամբ և տնտեսության արտահանելի հատվածի մեծացմամբ: Միաժամանակ 2013 թվականին կավելանա նաև տնտեսական աճին արտաքին հատվածի նպաստումը:

Աղյուսակ 3.3.2 Ծախսային բաղադրիչների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կազմում

	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	ծրագ.	կանխ.
Սպառում	93.7	95.1	96.6	97.0	96.5
Ներդրում	34.7	32.9	27.9	26.3	26.9
Զուտ արտահանում, այդ թվում	-27.5	-24.5	-23.6	-23.1	-21.5
Արտահանում ¹⁷	15.5	20.8	23.8	25.6	27.5
Ներմուծում ¹⁸	-43.0	45.3	47.4	48.7	49.0
Վիճ. Շեղում	-0.8	-3.5	-0.9	-0.2	-1.9
Ընդամենը ՀՆԱ	100	100	100	100	100

¹⁷ Ներառված են նաև ծառայությունները

¹⁸ Ներառված են նաև ծառայությունները

3.4 Գնային փոփոխականներ

Տնտեսությունում գների մակարդակը բնութագրվում է սպառողական գների ինդեքսով (ՍԳԻ) կամ ՀՆԱ դեֆլյատորով: Իսկ դրանց փոփոխությունները ցույց են տալիս տնտեսությունում նկատվող գնաճի կամ գնանկման միտումները: ՍԳԻ-ն ցույց է տալիս որոշակի սպառողական ապրանքների (ներառյալ ներմուծված) զամբյուղի գների վարքագիծը, իսկ ՀՆԱ դեֆլյատորը՝ միայն մեր տնտեսությունում ստեղծված ապրանքների և ծառայությունների գների վարքագիծը:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

Սպառողական գներ: 2011 թվականի սկիզբը բնութագրվում էր բարձր գնաճային միջավայրով, որը հետևանք էր 2010 թվականի ընթացքում միջազգային շուկաներում հումքային և պարենային ապրանքների գների աճի, ՀՀ-ում գյուղատնտեսության ճյուղի խորը անկման պայմաններում այդ ճյուղի առաջարկի կրճատման, նշվածի արդյունքում արձանագրված բարձր գնաճի երկրորդային ազդեցությունների պայմաններում ձևավորված բարձր գնաճային սպասումների: Ընդ որում, մարտի վերջին գրանցվել էր 12-ամսյա գնաճի վերջին երեք տարվա կտրվածքով ամենաբարձր մակարդակը՝ 11.5 տոկոս, իսկ հաջորդող ամիսների ընթացքում գնաճային միջավայրը աստիճանաբար մեղմվել է, ինչի արդյունքում էլ տարին ամփոփվել է գնաճի տարեկան 4.7 տոկոս ցուցանիշով՝ գտնվելով տատանումների թույլատրելի միջակայքում: Նշենք, որ տարվա ընթացքում 12-ամսյա գնաճի նվազողական վարքագիծը հիմնականում պայմանավորված է եղել տարեսկզբից դրամավարկային պայմանների խստացմամբ, արտաքին շուկաներում պարենային և հումքային ապրանքների գների որոշակի կայունացմամբ, իրականացված հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցությամբ և նախորդ տարվա համեմատությամբ տեղական արտադրության գյուղմթերքների թողարկման ծավալների աճի պայմաններում դրանց գների նվազմամբ (2011 թվականի ապրիլ-սեպտեմբեր ժամանակահատվածում գրանցվել է 4.4 տոկոս գնանկում՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 0.4 տոկոս գնաճի դիմաց):


2012 թվականի անցած ութ ամիսների ընթացքում գնաճը շարունակել է դրսևորել նվազողական վարքագիծ, որի արդյունքում օգոստոսի վերջին 12-ամսյա գնաճը կազմել է 2.5 տոկոս: Վերջինս պայմանավորված է բացառապես պարենային ապրանքների գների անկմամբ, այն դեպքում, երբ ոչ պարենային ապրանքների գները և ծառայությունների սակագները հիմնականում արձանագրել են սպասված աճերը: Նշենք, որ դեռևս 2010 թվականի կեսերից, երբ դիտվեց գյուղատնտեսության ճյուղի թողարկման ծավալների զգալի անկում, տեղական արտադրության գյուղմթերքների գների սեզոնային ավելի քիչ նվազման ազդեցությամբ ձևավորվեցին 12-ամսյա գնաճի բարձր մակարդակներ: Այնուհետև,

անցած երկու տարվա ընթացքում, գյուղատնտեսության ճյուղի զարգացման (2011 թվականի տարեկան աճը՝ 13.6 տոկոս, 2012-ի առաջին կիսամյակի տ/տ աճը՝ 8.4 տոկոս) արդյունքում տեղական արտադրության գյուղմթերքների առաջարկված մեծ ծավալները հանգեցրել են դրանց գների շարունակական նվազմանը: Նշված գործոնով էլ պայմանավորված՝ 12-ամսյա գնաճի ցածր մակարդակի ձևավորմանը գերակշռող նպաստում է ունեցել պարենային ապրանքների գների փոփոխությունը: 2012 թվականի հունիսին պարենային ապրանքների 12-ամսյա 0.9 տոկոս գնանկմանը մեծապես նպաստել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբի գների 21.4 տոկոս անկումը: Ոչ պարենային ապրանքների և ծառայությունների գներն աճել են համապատասխանաբար տ/տ 3.9 և 1.9 տոկոսներով:

Նշված ծամանակահատվածում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է անփոփոխ թողել վերաֆինանսավորման տոկոսադրույքը (8.0 տոկոս): Վերջինս պայմանավորված էր հիմնականում երկու գործոնով. նախ, մայիս-հունիս ժամանակահատվածում դիտված դրամի արժեզրկումն արդեն իսկ դրամավարկային պայմանների թուլացում էր և, երկրորդ, 12-ամսյա բնականոն գնաճն այդ ընթացքում մշտապես գտնվել է գնաճի նպատակային ցուցանիշի սահմաններում: Մյուս կողմից, 12-ամսյա գնաճի վերջին ամսիներին ձևավորված ցածր մակարդակն առավելապես պայմանավորված է եղել գյուղմթերքների գների անկման ընդգծված սեզոնայնությամբ, որի ազդեցությունը գնաճի վրա մինչև տարեվերջ կվերանա և կանխատեսվող հորիզոնում այն կմոտենա իր նպատակային ցուցանիշին՝ պահպանվելով 4 (+/-1.5) տոկոսային կետ տատանումների թույլատրելի միջակայքում:

Կանխատեսում: Նշված զարգացումները թույլ են տալիս ակնկալել, որ 2012 և 2013 թվականների համար գնաճը կպահպանվի նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս տատանման թույլատրելի միջակայքում և 12-ամսյա գնաճը կկազմի շուրջ 4 տոկոս:

Գծապատկեր 3.4.1 2000-2013 թվականների գնաճի (ՍԳԻ) դինամիկան



ՀՆԱ դեֆլյատոր: 2009 թվականի տնտեսական ճգնաժամով պայմանավորված դեֆլյատորի աճը նախորդ տարիներին արձանագրված ցուցանիշի միջինից զգալիորեն ցածր էր՝ 2.6 տոկոս:

2010 թվականին միտումը կտրուկ փոխվել է. դեֆլյատորը աճել է 9.2 %-ով՝ պայմանավորված գյուղատնտեսության և արդյունաբերության գների բարձր դեֆլյատորներով, ընդ որում արդյունաբերության դեֆլյատորը կրում էր միջազգային շուկաների (պղնձի և մոլիբդենի մասով), ինչպես նաև գազի գների աճի ազդեցությունը: Իսկ գյուղատնտեսության բարձր դեֆլյատորը հիմնականում պայմանավորված էր գյուղատնտեսական ապրանքների տեղական առաջարկի կրճատմամբ:

2011 թվականին երկրորդ եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը աճել է 4.2%-ով, որը կրում է հիմնականում գյուղատնտեսության բարձր դեֆլյատորի ազդեցությունը (նպաստումը 2.6 տոկոսային կետ):

2012 թվականի հունվար- հունիսին ՀՆԱ դեֆլյատորը ցածր է եղել աճելով 1.3 %-ով: Դեֆլյատորի ցածր աճը հիմնականում պայմանավորված է բարենպաստ գյուղատնտեսական պայմանների արդյունքում գյուղմթերքների գների խոշոր անկմամբ (գյուղատնտեսության դեֆլյատորը նվազել է շուրջ 10%-ով): ՀՆԱ դեֆլյատորին բացասական նպաստում են ունեցել նաև շինարարության և արդյունաբերության ճյուղերում ցածր դեֆլյատորները:

Կանխատեսում: Մինչև տարեվերջ՝ պայմանավորված տարվա վերջին եռամսյակներում տնտեսական ակտիվության արագացմամբ, կանխատեսվում է գրանցվածից ավելի բարձր 102.4 տոկոս, ՀՆԱ դեֆլյատոր:

2013 թվականին՝ հաշվի առնելով ներքին գների իներցիոն հակվածությունը, դեֆլյատորը կկայունանա՝ կազմելով շուրջ 103.2 տոկոս:

3.5 Ֆինանսական շուկա

Ֆինանսական շուկաները բնութագրվում են մի շարք ցուցանիշների համախմբով: Սակայն, այս բաժնում մենք կուսումնասիրենք հիմնականում երկու ցուցանիշ՝ առաջինը ֆինանսական միջնորդության խորությունն է և երկրորդը՝ ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները՝ որպես ֆինանսական միջոցների ձևավորված գին:

Ֆինանսական միջնորդության խորության ցուցանիշը բնութագրում է թե ֆինանսական ինստիտուտները (բանկեր, վարկային կազմակերպություններ, ներդրումային ընկերություններ և այլն) ինչ չափով են ներգրավված տնտեսություն մեջ:

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքներն ազատ մրցակցության պայմաններում ցույց են տալիս, թե ինչքան է փողի գինը՝ հաշվի առած ֆինանսական շուկայի մասնակիցների կողմից գնահատվող տարբեր ռիսկերի աստիճանը: Եթե տոկոսադրույքները բարձր են տրված ռիսկայնության աստիճանի պարագայում, ապա տնտեսությունում առկա է գնաճային ճնշումներ կամ սպասումներ և հակառակը:

Այսինքն, ֆինանսական շուկայում ձևավորվում է փողի առաջարկը, պահանջարկը (փողի զանգված, փողի բազա) և դրա գինը (բանկային տոկոսադրույք) տնտեսական գործունեություն ծավալողների համար: Այդ տեսանկյունից, ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական կայունության պահպանման համար ունի կարևոր նշանակություն:

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխատեսումները

2008 թվականի վերջին եռամսյակում, տնտեսության աճի տեմպերի դանդաղման և 2009 թվականին առաջին կեսին արձանագրված 14.1 տոկոս տնտեսական անկման պարագայում, նկատելի եղավ նաև փողի նկատմամբ պահանջարկի նվազումը, թեև 2009 թ-ի տարվա երկրորդ կեսին այն սկսեց կտրուկ վերականգնվել: Արդյունքում փողի զանգվածի աճը 2008 և 2009 թվականներին կազմել է համապատասխանաբար 2.4 և 15.1 տոկոս: 2011 թվականին փողի զանգվածի աճը կազմել է 23.7 տոկոս: Արդեն, 2012 թվականի հուլիսին փողի զանգվածն աճել է 20.1 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

2009 թվականների տարեկան արդյունքներով փողի բազայի աճը կազմել է 13.8 տոկոս, վերջինս տարվա երկրորդ կեսից տնտեսության աստիճանական աշխուժացման արդյունք էր: 2011 թվականին փողի բազան աճել է 32.3 տոկոսով: 2012 թվականի հուլիսին փողի բազան աճել է 13.3 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:

Վերջին 5 տարիների ընթացքում առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռը ՀՆԱ-ի մեջ զգալի ավելացել է: Հատկանշական է, որ նույնիսկ ճգնաժամի ժամանակ նշված ցուցանիշի նվազում չի արձանագրվել, ինչում կարևոր դերակատարություն է ունեցել կառավարության հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում համակարգաստեղծ ձեռնարկություններին, ինչպես նաև արտահանման և ներմուծման փոխարինման ուղղվա-

ծույթուն ունեցող ՓՄՁ սուբյեկտներին կառավարության կողմից տրամադրված ֆինանսական օժանդակությունը:

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրված վարկերը 2011 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 319.7 մլրդ դրամով կամ 33.7 տոկոսով¹⁹ և ՀՆԱ-ի մեջ կազմել է 33.6 տոկոս: Արդեն 2012 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ վարկերը ավելացել են 356.6 մլրդ դրամով (31.6%-ով):

Նշենք նաև, որ 2007 թվականից զգալի ոլորտային փոփոխություններ են արձանագրվել առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կշիռներում: 2011 թվականի վերջի դրությամբ արդյունաբերության ոլորտին տրված վարկերի կշիռն ընդհանուր վարկերի մեջ կազմել է 22.4 տոկոս և 2007 թվականի համեմատ աճել է 8.8 տոկոսային կետով, սպառողական վարկերի կշիռը 2007 թվականի նկատմամբ նվազել է 11.8 տոկոսային կետով կազմելով՝ 18.2 տոկոս, հիպոթեքային վարկերի կշիռը 2007 թվականի նկատմամբ աճել է 3.7 տոկոսային կետով՝ կազմելով 9.2 տոկոս (մյուս ոլորտներում զգալի փոփոխություններ չեն արձանագրվել):

Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներից և ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդները 2009 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են, ՀՆԱ-ի մեջ կազմել 20.4 տոկոս: Հատկանշական է, որ ճգնաժամի պայմաններում ֆինանսական շուկաների նկատմամբ վստահության անկում՝ ի դեմս բանկերից ավանդների փախուստի և ֆինանսական շուկաների անկայունություն չի նկատվել: Նշվածը պայմանավորվել է ճգնաժամի ժամանակ կառավարության և կենտրոնական բանկի միջև քաղաքականությունների արդյունավետ կոորդինացմամբ, ինչպես նաև նախորդ տարիներից եկող ֆինանսական համակարգի բարձր կապիտալացմամբ: Առևտրային բանկերի կողմից ներգրավված ավանդները 2011 թվականի դեկտեմբերի վերջի դրությամբ նախորդ տարվա համեմատ ավելացել են 261.6 մլրդ դրամով կամ 34.4 տոկոսով և ՀՆԱ-ի մեջ կազմել 27.1 տոկոս: Նշենք նաև, որ 2011 թվականի ընթացքում նկատվել է դոլարայնացման մակարդակի նվազում, ռեզիդենտներից ներգրավված արտարժույթով ավանդների կշիռը ընդհանուր ավանդների մեջ կազմել են 61 տոկոս՝ նախորդ տարվա 64 տոկոսի համեմատ: Նշվածը պայմանավորվել է ԿԲ-ի և Կառավարության կողմից ապադոլարայնացման միջոցառումների իրականացմամբ: Արդեն 2012 թվականի հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավանդները ավելացել են 208.7 մլրդ դրամով (23.9%-ով):

¹⁹ Ընդգրկված չեն կուտակված տոկոսները: Վարկերի մեջ ներառված են նաև ֆակտորինգային, լիզինգային գործառնությունները և ռեպո համաձայնագրերը:

Աղյուսակ 3.5.1 Բանկային ակտիվներ/ՀՆԱ 2008 - 2011 թվականները (մլրդ դրամով)

	2008	2009	2010	2011
ՀՆԱ անվանական	3568.2	3141.7	3460.2	3776.4
Վարկեր	634.4	749.6	949.1	1268.8
Վարկերի կշիռը ՀՆԱ-ում % ²⁰	17.8	23.9	27.4	33.6
Ավանդներ	496.1	642.3	761.5	1023.1
Ավանդների կշիռը ՀՆԱ-ում %	13.9	20.4	22	27.1

Առևտրային բանկերի՝ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2011 թվականին միջին հաշվով կազմել են 17.76 տոկոս՝ 2010 թվականի 19.2 տոկոսի համեմատ: Հատուկ ուշադրության է արժանի այն, որ առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սպրեդը 2011 թվականին 2010 թվականի նկատմամբ նվազել է 1.7 տոկոսային կետով կազմելով 8.5 տոկոսային կետ: Արդեն 2012 թվականի հունվար-հուլիսին առևտրային բանկերի դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները միջին հաշվով կազմել են 17.6 տոկոս՝ 2011 թվականի հունվար-հուլիսին 17.8 տոկոսի համեմատ: Նույն ժամանակահատվածում առևտրային բանկերի դրամով ներգրավված ավանդների տոկոսադրույքները միջին հաշվով կազմել են 9.3 տոկոս՝ 2011 թվականի հունվար-հուլիսին 9.1%-ի համեմատ: Այսպիսով առևտրային բանկերի՝ մինչև մեկ տարի ժամկետով դրամով ներգրավված ավանդների և վարկերի տոկոսադրույքների միջև սպրեդը 2012 թվականի հունվար-հուլիսին 2011 թվականի հունվար-հուլիսի նկատմամբ նվազել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 8.3 տոկոսային կետ:

Աղյուսակ 3.5.2 Ֆինանսական շուկայի 2008-2012թթ առանձին ամիսների միջին տոկոսադրույքները

%	2008		2009		2010		2011		2012						
	VII	XII	VII	XII	VII	XII	VII	XII	I	II	III	IV	V	VI	VII

²⁰ Ցուցանիշների համադրելիությունը ապահովելու տեսանկյունից վարկերը պետք է դիտարկել տարեկան ՀՆԱ-ի մեջ:

Վարկեր ²¹	16.8	16.5	18.5	18.8	18.3	18.9	17.2	17.7	18.6	18.1	17.4	18	17.5	16.7	16.6
Ավանդներ	6.2	7.7	9.1	8.1	9.5	8.8	9.0	10.3	10.1	9.5	8.6	9.0	9.2	9.0	10.1

Կանխատեսում: 2012 թվականին կանխատեսվող մակրոտնտեսական միջավայրի վերաբերյալ գնահատականները, ինչպես նաև 2012 թվականի 7 ամսվա տվյալները ցույց են տալիս, որ 2012 թվականին փողի բազայի և զանգվածի աճերը կկազմեն համապատասխանաբար շուրջ 11.4 և 17.8 տոկոս, իսկ 2013 թվականին՝ շուրջ 16.2 և 13.3 տոկոս:

3.6 Վճարային հաշվեկշիռ

Հայաստանի արտաքին տնտեսական գործունեության արդյունքում տեղի են ունենում տնտեսական հոսքեր դեպի հանրապետություն և հակառակ ուղղությամբ: Այդ հոսքերը արտացոլվում են երկրի վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը բաղկացած է երկու հիմնական բաժիններից.

- ընթացիկ հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ իրականացվող իրական գործարքները՝ ներմուծում, արտահանում, տրանսֆերտներ և գործոնային եկամուտներ)
- կապիտալի և ֆինանսական հաշիվ (ցույց է տալիս ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական բնույթի գործարքները (կապիտալի ներհոսքն ու արտահոսքը))

Տնտեսության արտաքին կայունության տեսանկյունից կարևոր ցուցանիշ է ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ: Միաժամանակ պետք է նշել, որ արտաքին աշխարհի հետ հարաբերություններում Հայաստանը համարվում է փոքր և բաց տնտեսություն ունեցող երկիր, ինչը նշանակում է, որ տնտեսական հոսքերի շարժը դեպի երկիր և երկրից դուրս հնարավորինս ազատականացված է: Դրա հետ մեկտեղ փոքր բաց տնտեսություններին հատկանշական է բարձր զգայնությունը համաշխարհային տնտեսության զարգացումներից (միջազգային բորսաներում գնանշվող ապրանքների գներ, գործընկեր երկրների տնտեսական զարգացում, համաշխարհային տնտեսության զարգացման միտում և այլն):

Վերջին տարիների միտումները, ընթացիկ իրավիճակը և կանխադրվածները

Մինչև գնաժամային տարիներին իրականացված տնտեսական և արժույթային քաղաքականությունների արդյունքում ընթացիկ հաշվի հիմնական ցուցանիշների մասով ձեռքբերումներն արտահայտվեցին ընթացիկ հաշվի պակասուրդի զգալի կրճատմամբ: Սակայն, սկսած 2008 թվականի

²¹ Հաշվարկված է 16 օրից մինչև մեկ տարի ժամկետով, միայն դրամով տրամադրված վարկերի և ներգրավված ավանդների համար (առանց միջբանկային շուկայի):

4-րդ եռամսյակից, տնտեսությունը կրեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամի անբարենպաստ դրսևորումները՝ կրճատվեցին Հայաստան ներհոսող տրանսֆերտները և գործույթային եկամուտները, ինչպես նաև հայաստանյան ապրանքների նկատմամբ արտաքին պահանջարկը: 2009 թվականին ճգնաժամի խորացմանը զուգահեռ ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ կրճատվեց 26.5 տոկոսով՝ արտահանումը նվազեց 32.7, իսկ ներմուծումը՝ 25.0 տոկոսով: Ներմուծման նվազումը, որը տեղի էր ունեցել առաջին անգամ վերջին 8 տարիների ընթացքում (2002 թվականից սկսած), հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների նվազմամբ, և մասամբ՝ 2009 թվականի մարտին տեղի ունեցած փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ: Արդյունքում 2009 թվականին ընթացիկ հաշվի պակասուրդը խորացավ և կազմեց ՀՆԱ-ի 15.8 տոկոսը՝ ընդհատելով բարելավման երկար ժամանակահատվածը:

Ընթացիկ հաշվի հաշվեկշռի բարելավումը 2010 թվականից մասնակիորեն վերականգնվեց: Պայմանավորված համաշխարհային, ինչպես նաև ՀՀ տնտեսության վերականգնմամբ արտաքին առևտրի ցուցանիշները դրսևորեցին աճի միտումներ: 2011 թվականին այդ միտումը շարունակվեց. տեղի ունեցավ արտահանման և ներմուծման դոլարային ծավալների աճ. արտահանումն աճեց 34.4 տոկոսով՝ կազմելով 1580 մլն դոլար, իսկ ներմուծումը կազմեց 3657.7 մլն դոլար²²՝ աճելով 14 տոկոսով: Ներմուծման աճը հիմնականում պայմանավորված էր բնակչության տնօրինվող եկամուտների աճով և տնտեսության վերականգնմամբ: Արտահանման ցուցանիշի բարելավման վրա արտաքին պահանջարկի աճի հետ մեկտեղ դրական ազդեցություն է ունեցել նաև ՀՀ կառավարության կողմից վարվող՝ արտահանողներին ֆինանսական և ոչ ֆինանսական օժանդակության քաղաքականությունը: Աղյուսակ 3.6.1-ում ներկայացված են արտաքին հատվածի հիմնական ցուցանիշների միտումները և սպասումները (տե՛ս նաև Գծապատկեր 3.6.1-ը):

2012 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին ապրանքաշրջանառությունը նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ աճել է 8.1 տոկոսով, ընդ որում՝ արտահանումն աճել է 13.1 տոկոսով՝ կազմելով 802.2 մլն դոլար, իսկ ներմուծումն աճել է 6.4 տոկոսով՝ կազմելով 2336.3²³ մլն դոլար: Տարվա յոթ ամիսներին արտահանման 13.1 տոկոս աճի ամենաբարձր՝ 7.1 տոկոսային կետը պայմանավորվել է «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ավելացմամբ, որը կազմել է 66.8 տոկոս: 2011 թվականի չորրորդ եռամսյակից պղնձի միջազգային գների նվազմամբ պայմանավորված «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և

²² ՀՀ վճարային հաշվեկշռի տվյալներով (ՖՕԲ)

²³ ՀՀ մաքսային հայտարարագրերով (CIF)

«Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբերի ընթացիկ տարվա յոթ ամիսների արդյունքներով 13.2 և 6.0%-ով նվազումը համապատասխանաբար 4.1 և 2.0 տոկոսային կետերով հակազդել են արտահանման աճին:

Ընթացիկ տարվա հունվար-հուլիսին ընդհանուր ներմուծման 6.4 տոկոս աճի ամենաբարձր՝ 3.6 և 1.2 տոկոսային կետերը պայմանավորվել են «Հանքահումքային արտադրանք» և «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբերի ներմուծման ավելացմամբ, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 19.0 և 15.8 տոկոս:

Ապրանքների գծով արտաքին առևտրի բացասական մնացորդը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1174.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 25.8 մլն ԱՄՆ դոլարով կամ 2.2 տոկոսով:

2012 թվականի հունվար-հուլիսին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 28.4 տոկոսը բաժին է ընկել ԱՊՀ և 30.5 տոկոսը՝ ԵՄ երկրներին, 2011 թվականի համապատասխան ժամանակահատվածի ընթացքում նշված երկրների տեսակարար կշիռները կազմել են 26.7 և 33.8 տոկոս: ԵՄ երկրների ապրանքաշրջանառության նվազումը նախորդ տարվա նույն ամիսների համեմատ կազմել է 2.3 տոկոս, իսկ ԱՊՀ երկրների աճը՝ 14.8 տոկոս: ՀՀ խոշոր առևտրային գործընկեր երկրների շրջանակում ընդգրկվել են Գերմանիան (առևտրաշրջանառության 8.3%-ը), Չինաստանը (7.3%), Իրանը (5.7%), ԱՄՆ-ն (4.3%), Բուլղարիան (3.7%), Բելգիան (3.6%), Թուրքիան (3.4%), Իտալիան (2.9%), Շվեյցարիան (2.7%), Նիդերլանդները (2.2%), ինչպես նաև ԱՊՀ երկրներից՝ Ռուսաստանը (22.6%) և Ուկրաինան (3.8%):

Հայաստանյան ապրանքների նկատմամբ ներկայացնելով հիմնական պահանջարկը, 2012 թվականի հունվար-հուլիս ամիսներին ՀՀ արտահանման 13.1 տոկոս աճի 12.3 տոկոսային կետը ապահովել են հետևյալ երկու երկրները. Ռուսաստանը՝ 7.5 և Բելգիան՝ 4.8 տոկոսային կետերով: Համեմատաբար մեծ պահանջարկ են ներկայացրել նաև Շվեյցարիան, Վրաստանը, Կանադան և Գերմանիան, որոնք արտահանման աճին համապատասխանաբար նպաստել են՝ 3.6, 2.4, 2.3 և 2.2 տոկոսային կետերով:

Փոխարժեք: Նախորդ տարիներին ձևավորված ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման միտումները 2009 թվականի տարեսկզբից դադարել են: Ըստ էության փոխարժեքի արժեզրկումը 2009 թվականին (15.8 տոկոսով) պայմանավորված էր համաշխարհային ճգնաժամի հետևանքով արտարժույթի ներհուսքի կտրուկ կրճատմամբ, որի արդյունքում տեղի է ունեցել հավասարակշիռ փոխարժեքի վարքագիծը պայմանավորող մակրոտնտեսական հիմնարարներից մեկի՝ ֆինանսական ներհուսքի վարքագծի փոփոխություն և փոխարժեքը ճշգրտվել է: 2010 թվականի

ընթացքում դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը գրեթե եղել է կայուն՝ դրսևորելով սեզոնային արժեզրկման և արժևորման վարքագծեր (տարեկան միջինի 2.8% արժեզրկում): 2011 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորել է բավական կայուն միտում՝ նախորդ տարվա համեմատ արժևորվելով 0.3 տոկոսով:

2012 թվականի տարեսկզբից ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը դրսևորել է արժեզրկման միտումներ՝ հիմնականում պայմանավորված վերջին ժամանակաշրջանում համաշխարհային շուկայում դոլարի դիրքերի ամրապնդմամբ: Դրամի արժեզրկմանը մասամբ նպաստել է նաև տարեսկզբից դիտարկվող կապիտալի ներհոսքի (հիմնականում տրանսֆերտների և գործոնային եկամուտների տեսքով) աճի որոշակի դանդաղումը: 2012 թվականի հունվար-հուլիս ամիսներին միջին փոխարժեքը կազմել է 397.5 դրամ 1 ԱՄՆ դոլարի դիմաց՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ արժեզրկվելով 7 տոկոսով:

ՀՀ ազգային արժույթը ոչ միայն դոլարի, այլ արտաքին առևտրի տեսանկյունից առավել կարևոր մի քանի արժույթներից բաղկացած «զամբյուղի» նկատմամբ (անվանական արդյունավետ փոխարժեք²⁴) ընթացիկ տարվա յոթ ամիսներին նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ արժեզրկվել է 0.9 տոկոսով, ինչը նշանակում է, որ ՀՀ դրամը արժեզրկվել է հիմնական արժույթների միավորված գնի համեմատ, ընդ որում վերոնշյալ ”զամբյուղում” ընդգրկված մնացած երկրների արժույթները դոլարի նկատմամբ նույնպես արժեզրկվել են (շուրջ 6%-ով): Հիմնականում պայմանավորված անվանական արդյունավետ փոխարժեքի վարքագծով՝ իրական արդյունավետ փոխարժեքի միջին արժեզրկումը տարվա յոթ ամիսների ընթացքում կազմել է 2.6 տոկոս²⁵, ինչը կարող է իր դրական ազդեցությունը թողնել երկրի ընթացիկ հաշվի հետագա զարգացման վրա:

Կանխատեսում: Ակնկալվում է, որ Հայաստանի տնտեսության արտաքին հատվածում տեղի ունեցող դրական զարգացումները կշարունակվեն, ինչը հիմնականում պայմանավորված կլինի Հայաստանի հիմնական գործընկեր երկրներում դիտվող տնտեսական զարգացումներով և կառավարության կողմից տնտեսության արտահանելի հատվածին ցուցաբերված օժանդակությամբ: Այսպես՝ 2012 թվականին մինչև տարեվերջ կանխատեսվում է փաստացի զարգացումներից մի փոքր ցածր՝ առնվազն 12 տոկոս դոլարային արտահայտությամբ արտահանման աճ:

²⁴ Արդյունավետ փոխարժեքը ցույց է տալիս ազգային արժույթի փոխարժեքի միջինացված շարժընթացը ոչ թե մեկ, այլ մի քանի, հանրապետության համար ավելի կարևոր արժույթներից բաղկացած “զամբյուղի” նկատմամբ: Ընդ որում, հաշվարկներում զամբյուղը կազմող արժույթները նախ բերվում են դոլարային արտահայտության, որից հետո ճշգրտվում են ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքով, այսինքն հաշվարկվում է դրամի կրոս կուրսը՝ յուրաքանչյուր տարադրամի 1 միավորի դիմաց (դրամի անուղղակի գնանշում):

²⁵ Հաշվարկներում օգտագործվել են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքի 2011թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ տվյալները:

2013 թվականին ակնկալվում է, որ համաշխարհային տնտեսական աճի փոքր ինչ արագացման և մյուս կողմից կառավարության՝ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականությանը և տնտեսության արտահանելի հատվածում ներդրումների խրախուսման քաղաքականությանը համահունչ, արտահանման բարձր աճը կպահպանվի՝ կազմելով 15 տոկոս (դոլարային արտահայտությամբ):


Ներմուծման աճը 2012 թվականի համար ակնկալվում է փաստացի զարգացումներին համապատասխան՝ մոտ 6 տոկոս: 2013 թվականի ապրանքների դոլարային արտահայտությամբ ներմուծման տարեկան աճը կդանդաղի և կկազմի 5.3 տոկոս՝ կապված արտերկրից ստացվող մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի ակնկալվող դանդաղման հետ:

Այս պայմաններում ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ 2012 թվականին կկազմի 10.7 տոկոս (առանց պաշտոնական տրանսֆերտների՝ 11.1 տոկոս), իսկ 2013 թվականին այն ևս կնվազի մինչև ՀՆԱ-ի 9.2 տոկոսը (առանց պաշտոնական տրանսֆերտների՝ 9.5 տոկոս), արձանագրելով կառավարության կողմից որդեգրած արտաքին հաշվեկշռվածության ապահովման քաղաքականության ճիշտ ուղղությունը:

Աղյուսակ 3.6.1. Վճարային հաշվեկշիռ (ՀՆԱ-ի նկատմամբ %)

	2008	2009	2010	2011	2012	2013
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-11.8	-15.8	-14.8	-10.9	-10.7	-9.2
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)/ՀՆԱ	-12.5	-16.8	-15.8	-12.5	-11.1	-9.5
Այդ թվում՝ եկամուտներ ուղղակի ներդրումներից/ՀՆԱ	-2.4	-3.8	-3.9	-3.7	-3.7	-3.7
Ուղղակի ներդրումներ/ՀՆԱ	7.9	8,4	6,1	4.4	4.5	4.5

Գծապատկեր 3.6.1 Ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ, 2000-2013թթ.



3.7 Պետական հատված

2011 թվականին պետական բյուջեի ընդհանուր եկամուտները կազմել են ՀՆԱ-ի 23.3 տոկոսը, նախորդ տարվա նկատմամբ բարելավվելով 0.8 տոկոսային կետով, իսկ հարկային եկամուտները՝ ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, կազմել են ՀՆԱ-ի 20.6 տոկոսը, նախորդ տարվա համեմատ բարելավվելով 0.4 տոկոսային կետով: Նախորդ տարվա նկատմամբ պետական բյուջեի եկամուտների անվանական աճը կազմել է 12.9 տոկոս, իսկ հարկային եկամուտներին՝ ներառյալ սոցիալական ապահովության վճարները՝ 11.1 տոկոս:


ՀՀ պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը 2011 թվականի արդյունքներով նախորդ տարվա նկատմամբ դրսևորել է նվազման միտում՝ 1.5 տոկոսային կետի չափով և կազմել 26.1 տոկոս: ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտը 2011 թվականին կազմել է ՀՆԱ-ի 2.8 տոկոսը, նախորդ տարվա 5 տոկոսի դիմաց:

2012 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ պետական բյուջեի եկամուտների գծով արձանագրվել է 4.9 տոկոս, իսկ հարկային եկամուտների մասով (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները)՝ 7.1 տոկոս աճ:

ՀՀ պետական բյուջեի ծախսերը 2012 թվականի հունվար-հուլիսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճել են 4.9 տոկոսով, որից ընթացիկ ծախսերի գծով արձանագրվել է 7.6 տոկոս աճ, իսկ կապիտալ ծախսերի գծով 22.7 տոկոս նվազում:

Ճգնաժամից հետո պետական հատվածի քաղաքականության հիմնական ուղղությունը եղել և մնում է արդյունավետ պարտքի կառավարման և պետական բյուջեի պակասուրդի աստիճանական կրճատման ապահովումը: 2009 թվականին իրականացված հնարավորինս ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականության դիմաց հետագա տարիներին իրականացվում է զսպող հարկաբյուջետային քաղաքականություն:

Գծապատկեր 3.7.1. Հարկաբյուջետային ազդակը²⁶ 2008-2013 թվականներին



Կանխատեսում: Մակրոտնտեսական քաղաքականության համատեքստում հարկաբյուջետային, հետևաբար և մակրոտնտեսական կայունության ապահովման տեսանկյունից ՀՀ կառավարությունը որդեգրել է «ելքի ռազմավարություն», որը ենթադրում է բյուջեի պակասուրդի մակարդակի սահուն իջեցում: 2012 թվականի համար պետական բյուջեի պակասուրդի մակարդակը ըստ գնահատականների կկազմի 2.8 տոկոս, որը սպասվող մակարդակից ցածր է և հիմնականում պայմանավորված է ծախսերի տնտեսամար:

2013 թվականի հարկաբյուջետային քաղաքականության կանխատեսումները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային եկամուտների բարելավում՝ ապահովելով 21.2 տոկոս մակարդակ (ներառյալ պարտադիր սոցիալական ապահովության վճարները) և 2013 թվականի պետական բյուջեի պակասուրդի մակարդակի ապահովում 2.6 տոկոսի մակարդակում:

²⁶ Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատելու համար օգտագործվել է հարկաբյուջետային ազդակի ցուցանիշը, որը բյուջեի եկամուտների ազդակի և ծախսերի ազդակի հանրագումարն է:

Հավելված. Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ

Ցուցանիշներ	2009	2010	2011	2012	2013
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	3141.7	3460.2	3776.4	4136.4	4537.3
Իրական ՀՆԱ ինդեքս	85.9	102.2	104.7	107.1	106.2
ՀՆԱ դեֆլյատոր	102.6	107.8	104.2	102.3	103.2
Սպառողական գների ինդեքս (ժամկետի վերջ)	106.5	109.4	104.7	104.0	104.0
Գնաճ (ժամանակաշրջանի վերջ) %	6.5	9.4	4.7	4.0	4.0
Գնաճ (միջին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ) %	3.4	8.2	7.7	2.4	4.2
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների՝					
ՀՆԱ	-14.1	2.2	4.7	7.1	6.2
Արդյունաբերություն	-6.9	9.2	13.5	9.4	9.2
Գյուղատնտեսություն	6.0	-16.0	13.6	7.9	4.5
Շինարարություն	-41.6	3.3	-12.5	2.2	3.5
Ծառայություններ	-3.3	4.1	5.0	6.4	6.2
Զուտ հարկեր	-22.5	13.4	4.3	10.0	8.0
ՀՆԱ ծախսային կոմպոնենտների իրական աճերը					
Վերջնական սպառում	-4.0	3.9	3.4	6.0	5.0
Պետական	-1.2	3.9	7.7	-0.3	-0.3
Մասնավոր	-4.4	3.9	2.7	7.0	5.8
Կապիտալի համախառն կուտակում	-30.9	0.5	-4.7	3.4	8.7
Պետական	11.5	-16.6	-3.8	-6.8	25.5
Մասնավոր	-37.4	5.2	-4.9	5.6	5.4
Ապրանքների և ծառայությունների արտահանում	-10.4	26.5	14.9	15.3	12.9

Ցուցանիշներ	2009 փաստ.	2010 փաստ.	2011 փաստ.	2012 սպասում	2013 կանխ.
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-19.2	12.8	-2.3	7.0	7.4
Արտաքին հատված					
Մլն. ԱՄՆ դոլար					
Ապրանքների և ծառայությունների արտահանում	1338	1937	2407	2654	2982
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	-3688	-4212	-4797	-5049	-5315
Ապրանքների արտահանում	749	1175	1580	1770	2035
Ապրանքների ներմուծում	-2830	-3208	-3658	-3859	-4071
Ապրանքների արտահանման աճ, %	-32.7	57.0	34.4	12.0	15.0
Ապրանքների ներմուծման աճ, %	-25.0	13.4	14.0	5.5	5.3
Ընթացիկ հաշիվ	-1369	-1373	-1108	-1106	-993
Արտաքին պարտք	2967	3299	3568	3859	4008
ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս					
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-27.2	-24.6	-23.6	-23.1	-21.5
Ապրանքների և ծառայությունների արտահանում	15.5	20.9	23.7	25.6	27.5
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	42.6	45.5	47.3	48.7	49.0
Առևտրային հաշիվ	-24.1	-21.9	-20.5	-20.1	-18.8
Ընթացիկ հաշիվ (ներառյալ պաշտոնական տրանսֆերտները)	-15.8	-14.8	-10.9	-10.7	-9.2
Ընթացիկ հաշիվ (առանց պաշտոնական տրանսֆերտների)	-16.8	-15.8	-12.5	-11.1	-9.5
Արտաքին պարտք	35.7	34.7	36.4	37.2	37.0
Ներմուծման ծածկույթը (ամիսներով)	6.5	5.3	4.9	3.9	3.2

Ցուցանիշներ	2009 փաստ.	2010 փաստ.	2011 փաստ.	2012 սպասում	2013 կանխ.
Դրամավարկային հատված²⁷					
Փողի զանգվածի աճ % (M2X ժամ. վերջ)	15.1	11.8	23.7	17.8	16.2
Փողի զանգվածի շրջապտույտի արագություն (<ՆԱ/M2X միջին)	4.0	4.0	3.7	3.4	3.2
Փողի բազմարկիչ (M2X)	1.6	1.6	1.7	1.7	1.8
Դրամային զանգվածի աճ % (M2 ժամ. վերջ)	-16.2	15.7	26.4	16.9	14.5
Դրամային զանգվածի շրջապտույտի արագություն (<ՆԱ/M2 միջին)	7.2	6.9	6.4	5.8	5.5
Դրամային բազմարկիչ (M2)	1.2	1.3	1.2	1.0	1.0
Փողի բազա, % (ժամ. վերջ)	13.8	-0.8	32.3	11.4	13.3

²⁷ Փողի զանգվածի և բազայի միջինները հաշվարկված են տարեկան տվյալների հիման վրա և այդ իսկ պատճառով կարող են տարբերվել ՀՀ ԿԲ-ի տվյալներից (ՀՀ ԿԲ-ը միջինները հաշվարկում է եռամսյակային տվյալների հիման վրա):

ԲՅՈՒՋԵԻ ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ²⁸ և ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսությունը շարունակում է զարգանալ էական անորոշությունների ներքո, ինչը պարտադրում է գնահատել հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում բյուջեի բազիսային ծրագրի հիմքում ընկած հիմնական ենթադրություններից և ՀՆԱ կանխատեսումներից հնարավոր շեղումների ազդեցությունը բյուջեի հոսքերի, այդ թվում մուտքերի, ելքերի և հնարավոր լրացուցիչ ֆինանսավորման պահանջի վրա:

Հայաստանը լինելով փոքր բաց տնտեսություն ունեցող երկիր առավել զգայուն է արտաքին հատվածից փոխանցվող ազդակներին: Այս առումով ՀՀ տնտեսության և պետական բյուջեով նախատեսվող հոսքերի վրա հիմնական ազդեցությունները կարող են ի հայտ գալ Եվրոմիությունում պարտքային ճգնաժամի խորացման արդյունքում: Նման իրավիճակը ուղղակիորեն և անուղղակիորեն կարող է անդրադառնալ տնտեսական աճի, գնաճային միջավայրի, փոխարժեքի և այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա, որոնք էական ազդեցություն են ունենում բյուջեի հոսքերի վրա:

Արժույթի միջազգային հիմնադրամի «Գլոբալ տնտեսական հեռանկարներ»-ի հուլիսյան գնահատականների համաձայն համաշխարհային տնտեսական աճի հեռանկարները վատացել են: Չնայած տնտեսական աճի կանխատեսումների նվազման ուղղությամբ ճշգրտումն էական չի եղել՝ 2012 և 2013 թվականներին համապատասխանաբար կազմելով 0.1 և 0.2 տոկոսային կետ, այդուհանդերձ նոր կանխատեսումները շարունակում են կախված մնալ երկու կարևոր ենթադրությունների իրագործումից, որոնց գծով անորոշությունները դեռևս շատ բարձր են:

Ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի առաջինը Եվրոմիության երկրների համատեղ ջանքերով պարտքային խնդիրների լուծման հարթ ընթացքի ապահովումն է, երկրորդը՝ ասիական զարգացող խոշոր երկրներում ներկայումս իրականացվող հարկաբյուջետային և դրամավարկային պայմանների թուլացման շարունակականությունը: ԱՄՀ փորձագետների կարծիքով նշված երկու գործոնների միաժամանակյա ի հայտ գալու ամենավատ սցենարի դեպքում անգամ համաշխարհային տնտեսության վրա ազդեցությունները նույն խորությամբ չեն կարող արտահայտվել, քան դա եղավ

²⁸ Բյուջեի ծրագրի ռիսկերը դրանք այն հավանականային գործոններն են որոնց ի հայտ գալը կնշանակի բյուջեի ծրագրային ցուցանիշներից շեղումներ: Ռիսկերը պայմանականորեն բաժանված են երկու խմբերի. Մակրոտնտեսական ռիսկերի և Հարկաբյուջետային ռիսկերի: Առաջին խմբի մեջ ներառված են մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերը, իսկ երկրորդ խմբի մեջ՝ պետական բյուջեի հոսքերի տեղի ունենալու հետ կապված ռիսկը:

2008-2009 թվականների ճգնաժամի ժամանակ: Այդ ազդեցությունները կարող են դրսևորվել առավել երկար ժամանակահատվածի ընթացքում, բայց առավել ցածր ուժգնությամբ, ինչը հնարավորություն կտա նաև առավել ճկուն և ոչ կտրուկ հակաճգնաժամային միջոցառումներ իրականացնել:

Այդուհանդերձ, համաշխարհային **տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերը** շարունակում են գերակշռել և կարող են ուղղակի և անուղղակի ազդեցության ճանապարհներով փոխանցվել ՀՀ տնտեսություն, ընդ որում անուղղակի ճանապարհներով ՀՀ տնտեսության վրա հնարավոր ազդեցությունները կլինեն համեմատաբար ավելի մեծ: Վերոնշյալ պարտքային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ միջոցառումների հետաձգման կամ քաղաքականության փոփոխության միջոցով ոչ բավարար չափով արձագանքման պայմաններում համաշխարհային տնտեսական աճի դանդաղումը կարող է փոխանցվել ՀՀ տնտեսություն հետևյալ հիմնական ճանապարհներով.

- **Ուղղակի ճանապարհով** ազդեցությունները պայմանավորված կլինեն Եվրոմիության (հիմնականում Եվրոգոտու) հետ առկա երկկողմանի առևտրային կապերի պայմաններում արտահանման տեմպերի կրճատմամբ, Եվրոմիությունից կապիտալ ներդրումների ծավալների կրճատմամբ և Եվրոմիությունից ստացվող աջակցության ծավալների նվազմամբ: Որքան երկարաձգվեն Եվրոգոտում կառուցվածքային խնդիրների համատեղ լուծումները, այնքան ավելի երկարատև կլինի այս տարածաշրջանի որոշ երկրների տնտեսական անկումները և գործազրկության աճի գործընթացները: Արդյունքում վերոնշյալ երեք ուղիներով այն կազդի Հայաստանի տնտեսական ակտիվության վրա: Եվրոգոտում տնտեսական աճի տեմպերի դանդաղումը մյուս կողմից կարող է ազդել ընդհանուր համաշխարհային պահանջարկի վրա: Եթե այս պայմաններում ֆիսկալ բնույթի խնդիրների լուծմամբ պայմանավորված ԱՄՆ-ը ևս իրականացնի առավել զսպողական հարկաբյուջետային քաղաքականություն, ապա համաշխարհային պահանջարկի տեմպերի նվազումը կարող է առավել զգալի լինել: Այս երևույթները կազդեն նաև միջազգային շուկայում հիմնականում ոչ պարենային բնույթի ապրանքների պահանջարկի, հետևաբար դրանց միջազգային գների վրա նվազման ուղղությամբ: Հաշվի առնելով հատկապես ոչ պարենային բնույթի ապրանքների գերակշռությունը ՀՀ արտահանման կառուցվածքում, այս զարգացումները կհանգեցնեն ՀՀ առևտրի պայմանների վատացմանը և արտահանման դոլարային ծավալների անկմանը՝ նվազեցնելով տնտեսական աճի տեմպերը: Որոշակիորեն կարող է դանդաղել նաև օտարերկրյա ներդրումների ներհոսքը Հայաստան: Արտարժույթային ներհոսքի կրճատման և ԱՄՆ կողմից բյուջեի պակասուրդի կրճատման քաղաքականության արդյունքում դոլարի ուժեղացման պարագայում կարող են ի հայտ գալ նաև

փոխարժեքի արժեզրկման ռիսկեր: Մյուս կողմից արտահանման կրճատման արդյունքում ներքին պահանջարկի անկումը և միջազգային շուկաներում ապրանքների գների նվազումը կարող են հանգեցնել ներքին շուկայում գների նվազման: Այս երկու գործընթացների միաժամանակ տեղի ունենալու պարագայում ներքին տնտեսության գնային ցուցանիշների վրա ազդեցությունը կլինի չեզոք:

- ՀՀ տնտեսության վրա գլոբալ զարգացումները կունենան նաև **անուղղակի ազդեցություն**. Ըստ միջազգային փորձագետների գնահատականների, դոմինոյի էֆեկտով Եվրոմիության ճգնաժամը կարող է տարածվել հատկապես Եվրոմիության հետ երկկողմանի առևտրային խոշոր շրջանառություն ունեցող երկրների վրա, այդ թվում նաև Ռուսաստանի վրա, որտեղից գալիս են հիմնական կապիտալ և տրանսֆերտային հոսքերը Հայաստան: Այս ճանապարհով ՀՀ տնտեսության վրա ազդեցությունը կարող է համեմատաբար ավելի նշանակալի լինել: Եվրոմիությունից Ռուսաստանի տնտեսության վրա ազդեցությունը հիմնականում կփոխանցվի նավթի գների նվազման ճանապարհով: Ընդ որում, հաշվի առնելով նաև միջին արևելքի աշխարհաքաղաքական ռիսկերի թուլացումը, նավթի արդյունահանման ծավալների աճի ավելի բարձր տեմպերը նավթի գների նվազման ռիսկը այս պահին ԱՄՀ փորձագետների կողմից գնահատվում է բարձր: Նավթի գների նվազման արդյունքում կարող է նվազել Ռուսաստանի տնտեսական աճի տեմպերը, ինչը կպայմանավորի նաև Հայաստան ներհոսող մասնավոր տրանսֆերտների և ուղղակի ներդրումների աճի տեմպերի դանդաղումը: Արդյունքում, վերջինս ազդեցություն կունենա ինչպես ներքին պահանջարկի նվազման և տնտեսական աճի տեմպերի դանդաղման վրա, այնպես էլ փոխարժեքի վրա:

Վերը նկարագրված ռիսկերը կարող են շեղումներ մտցնել բյուջեի բազային սցենարի հիմքում ընկած կանխատեսումներում և ենթադրություններում, ինչն էլ կարող է անդրադառնալ բյուջեի նախատեսված հոսքերի վրա: Ստորև ներկայացվում են կանխատեսումների և ենթադրությունների հետ կապված ռիսկերի ազդեցության քանակական գնահատականները, այդ ռիսկերի դրսևորման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության հնարավոր այլընտրանքային ուղղությունները և վերջիններիս ապահովման նպատակով լրացուցիչ ֆինանսական պահանջի լրացման աղբյուրները:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ

1. Կանխատեսումների ռիսկ

Սովորաբար կանխատեսումներն իրագործվելիս ի հայտ են գալիս որոշ շեղումներ, որոնք կապված են լինում օգտագործվող կանխատեսման մոդելների տեղայնացումից և մասնավորեցումից,

տնտեսության կառուցվածքային տեղաշարժերից²⁹, նոր ի հայտ եկող երևույթներից (որի վերաբերյալ նախկինում տեղեկատվությունը բացակայել է) և այլն: Այս ռիսկերն ընդունված է անվանել կանխատեսման ռիսկեր: Բյուջեի ծրագրի կատարման տեսանկյունից կարևորվում է ՀՆԱ-ի կանխատեսման ռիսկի գնահատումը, քանի որ բյուջեի ծրագրված սցենարի հարթ իրականացումը կախված է տնտեսությունում ստեղծված անվանական ՀՆԱ-ի մեծությունից: ՀՆԱ գծով կանխատեսումների ռիսկը գնահատվել է նախորդ մի քանի տարիներին պետական բյուջեների հիմքում դրվող ՀՆԱ կանխատեսված ցուցանիշների և ՀՆԱ փաստացի ցուցանիշների միջև շեղման հիման վրա: Մասնավորապես, 2010-2011 թվականների փաստացի անվանական ՀՆԱ-ները միջին հաշվով շեղվել են կանխատեսվածից **4 տոկոսով**: Այս պարագայում, հաշվի առնելով կանխատեսվածից ցածր ՀՆԱ ձևավորման վերոնկարագրյալ ռիսկերի գերակշռությունը, որպես ռիսկ է դիտարկվել ՀՆԱ կանխատեսված մակարդակից 4%-ով ավելի ցածր մակարդակի ձևավորումը:

Կանխատեսման ռիսկի նույնիսկ առավելագույն չափով դրսևորման պարագայում **Կառավարության հիմնական նպատակադրումը պետք է լինի բյուջեով նախատեսված ծախսերի ամբողջությամբ իրականացումը**, ինչը կհանգեցնի բյուջեի պակասուրդի մեծացման և կպահանջի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրների ներգրավում, քանի որ կանխատեսվածից ցածր ՀՆԱ-ն նույն Հարկեր/ՀՆԱ ծրագրված ցուցանիշի պահպանման դեպքում կնշանակի բյուջեի ավելի քիչ եկամուտ: Դրա հետ մեկտեղ հարկաբյուջետային քաղաքականությունը պետք է լինի հակացիկլիկ և ՀՆԱ-ի աճի տեմպերի զգալի (2 տոկոսային կետից ավել) դանդաղման պարագայում իրականացնի խթանող հարկաբյուջետային քաղաքականություն: ՀՀ ֆինանսների նախարարությունը գնահատել է, որ ՀՆԱ-ի աճը կանխատեսվածից 4%-ով պակաս լինելու դեպքում հակացիկլիկ քաղաքականություն իրականացնելու և բյուջեի ծախսերի ամբողջությամբ կատարման համար լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կարող է կազմել 40 մլրդ. դրամ կամ կանխատեսված ՀՆԱ-ի նկատմամբ 0.9%³⁰:

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների, որոնք ցույց են տալիս հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի և կարճաժամկետ հատվածում՝ տնտեսական աճի վրա, վերոնշյալ հակացիկլիկ գործողությունների արդյունքում հնարավոր կլինի

²⁹ Սա որոշակիորեն կապված է նաև մոդելների սպեցիֆիկացիաների հետ, քանի որ ժամանակային շարքերի վրա հիմնված մոդելներն իրենց մեջ ներառում են տնտեսության նախորդ ժամանակահատվածի զարգացումների տեղեկատվությունը, իսկ կանխատեսվող տարում ի հայտ եկող տնտեսության կառուցվածքային տեղաշարժը միայն կարող է ներառվել հաջորդ տարվա կանխատեսումների մոդելներում:

³⁰ Նմանատիպ Ռիսկի չափ է գնահատում նաև ՌԴ կառավարությունը: Համեմատության համար նշենք, որ օրինակ ՌԴ կառավարությունը նախատեսում է հակաճգնաժամային 500 մլրդ. ՌԴ ռուբլի ծավալով պորտֆել (6 անգամ ավելի քիչ, քան 2009 թվականին ծախսվածը), ինչը կազմում է ՌԴ 2011 թվականի ՀՆԱ-ի շուրջ 1 %-ը:

ծախսելով ՀՆԱ-ի 1 տոկոսը խթանել տնտեսական աճի տեմպերը շուրջ 1.5 տոկոսային կետով: Նշենք նաև, որ ՀՆԱ կանխատեսված մակարդակից նվազման ուղղությամբ շեղումը ամբողջությամբ չեզոքացնելու կամ տնտեսությանը լրացուցիչ 4% աճի ազդակ հաղորդելու համար կպահանջվի³¹ 110-120 մլրդ. դրամ լրացուցիչ ֆինանսավորման ներգրավում: ***Ընդ որում նման խոշորածավալ լրացուցիչ միջոցների „ներարկումը“ տնտեսություն կարող է ամբողջությամբ չկլանվել մեկ տարվա ընթացքում և ընդլայնողական ազդեցությունների մի մասը փոխանցվի նաև հաջորդ տարի:***

2. Ենթադրություններից շեղումների ռիսկ

Որպես կանոն բյուջեի հիմքում դրվող կանխատեսումները կառուցվում են որոշակի ենթադրությունների հիման վրա, որոնք էլ իրենց հերթին կապված են նաև արտաքին գործոններից (օրինակ ներքին տնտեսության գնաճը միջազգային շուկաների գների կանխատեսվող վարքագծից): Սակայն միշտ չէ, որ այդ ենթադրությունները կանխատեսվող հորիզոնում իրականություն են դառնում՝ կապված կառավարության և Կենտրոնական Բանկի կառավարման դաշտից դուրս ի հայտ եկող երևույթների (օրինակ նավթի գների հնարավոր փոփոխությունները): Պատմականորեն, որոշակի գործոնների ազդեցությամբ, տեղի են ունենում շեղումներ այդ ենթադրություններից, ինչն էլ շեղումներ է մտցնում բազիսային կանխատեսումներում: Օրինակ, կանխատեսման համար հիմք է ընդունվում ԿԲ-ի կողմից գնաճի կանխատեսված կենտրոնական արժեքը, սակայն իրականում տարբեր գործոնների ազդեցությամբ կարող են տեղի ունենալ նշված արժեքից շեղումներ, ինչը շեղումներ կարող է մտցնել նաև բյուջեի հիմքում դրվող կանխատեսումներից:

2.1 Գնաճի շեղման հնարավոր չափը

Որպես գնաճի շեղման հնարավոր չափ է դիտարկվում ԿԲ-ի կողմից դրամավարկային ծրագրերում (գնաճի հաշվետվություններում) ներկայացվող գնաճի կենտրոնական արժեքից շեղման առավելագույն չափը: Այս պահին գործող դրամավարկային ծրագրով այդ չափը 2013 թվականի համար գնահատվում է կանխատեսման կենտրոնական արժեքից ներքև ուղղությամբ՝ **4 տոկոսային կետի չափով** (այսինքն գնաճի ներքին սահմանը՝ 0% է) և **վերև ուղղությամբ շեղումը՝ 2 տոկոսային կետի չափով** (վերին սահմանը՝ 6% է): Գնաճի գծով ռիսկը կարող է ազդել ինչպես անուղղակի հարկերի մուտքերի վրա, այնպես էլ բյուջեով նախատեսված ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի վրա: Գնային

³¹ Պետական բյուջեի ծախսերի մուլտիպլիկատորը OECD երկրների համար ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ գնահատվել է 1.1 գործակցով, իսկ Հայաստանի համար ըստ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատվում է՝ շուրջ 1.5:

ցուցանիշների հնարավոր նվազման պայմաններում անուղղակի հարկերից մուտքերը կկրճատվեն, մյուս կողմից բյուջեի ծախսային մասում տնտեսումներ տեղի կունենան ապրանքների գնման ծախսերի գծով: Արդյունքում գների նվազման ռիսկի զուտ ազդեցությունը գնահատվում է 13 մլրդ. դրամ՝ ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ:

2.2 Փոխարժեքի շեղման հնարավոր չափը

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մակրոտնտեսական քաղաքականությունն իրականացվում է լողացող փոխարժեքի սկզբունքի հիման վրա, իսկ կենտրոնական բանկը և ֆինանսների նախարարությունը փոխարժեքի կանխատեսումներ չեն իրականացնում, յուրաքանչյուր տարվա բյուջեի հիմքում դրվում է փոխարժեքի անփոփոխ (որոշակի պահի դրությամբ) մակարդակի պահպանման ենթադրություն: Ընդ որում փոխարժեքի ուղղակի ազդեցություն տարեկան բյուջեի կատարողականի վրա առկա չէ³² միասնական գանձապետական հաշվին դրամաշնորհների և վարկերի ստացման, արտաքին տոկոսավճարների և վարկերի մարման, ինչպես նաև անդամավճարների մասով: Սակայն փոխարժեքի տատանումները կազդեն բյուջեի եկամուտների վրա՝ սահմանին գանձվող հարկային եկամուտների և ծախսերի վրա՝ պետության կողմից ներմուծվող ապրանքների գնման մասով:

Հաշվի առնելով, որ պատմականորեն և արժևորման, և արժեզրկման ուղղությամբ փոխարժեքի մեկանգամյա փոփոխությունները չեն գերազանցել 20%-ը, որպես ռիսկ է դիտարկվել առավելագույնը դրամի 20% արժեզրկումը: Այս գնահատականը համապատասխանում է նաև պարտքի կայունության վերլուծության հիմքում դրվող գնահատականին: Պետական բյուջեի արտարժույթի տատանումներով պայմանավորվող արտարժույթային ներհոսքը ավելին է քան արտահոսքը, որով էլ պայմանավորված փոխարժեքի արժեզրկման դեպքում զուտ հաշվով նշանակում է, որ փոխարժեքի արժեզրկման պարագայում բյուջեի պակասուրդի ֆինանսավորման պահանջը կնվազի: Ըստ գնահատականների փոխարժեքի յուրաքանչյուր 1 %-ով արժեզրկմանը համապատասխանում է բյուջեի զուտ մուտքերի ավելացում 0.5 մլրդ. դրամով: Հետևաբար, փոխարժեքի 20%-ով արժեզրկման ռիսկի դրսևորման դեպքում այլ հավասար պայմաններում բյուջեն կարող է ունենալ 10 մլրդ. դրամ լրացուցիչ մուտք:

³² ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ Կենտրոնական Բանկի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի դրույթների համաձայն բյուջեի տարեկան մուտքերն ու ելքերը կենտրոնական բանկը, որպես կառավարության ֆինանսական գործակալ իրականացնում է բյուջեի ծրագրում դրված փոխարժեքով:

2.3 Բյուջեի արտաքին ներհոսքերի չստացման ռիսկեր

Այս ռիսկերը կարող են դրսևորվել հետևյալ երկու հիմնական ուղղություններով.

- դեռևս պայմանագրերով չհաստատված, բայց բյուջետային ծրագրում նախատեսված վարկային ծրագրերի գծով մուտքերի հնարավոր չստացումն է, որը կազմում է շուրջ 11 մլրդ. դրամ:
- Ծրագրերի իրականացման գրասենյակների (ԾԻԳ) միջոցով ֆինանսավորվող ծրագրերի ցածր կատարողականի արդյունքում բյուջեով նախատեսված ծախսերի ժամանակին չկատարումը: Վերջին երկու տարիներին ԾԻԳ-երի կատարողականը կազմել է միջինում մոտ 80 տոկոս, հետևաբար հնարավոր չստացման ռիսկերը կարող է կազմել 20 մլրդ դրամ:

1. Մակրոտնտեսական կանխատեսումների և ենթադրությունների ռիսկերի ազդեցության գնահատումը

Ռիսկի տեսակը	Ֆինանսավորման պահանջ
	մլրդ դրամով
Ընդհանուրը	-74
1. Կանխատեսածից 4 տոկոսով ավելի ցածր ՀՆԱ ձևավորում	-40
2. Ենթադրությունների հետ կապված ռիսկեր, այդ թվում	-34
2.1. 4 տոկոսային կետով ավելի ցածր գնաճի ռիսկ	-13

2.2. Փոխարժեքի առավելագույնը 20 % -ով արժեզրկման ռիսկ	10
2.3. Բյուջեի արտաքին հոսքերի չստացման ռիսկեր, այդ թվում	-31
չհաստատված վարկային ծրագրերի գծով	-11
ԾԻԳ-երի կատարողականի գծով	-20

Ամփոփելով նշենք, որ ՀՆԱ-ի գծով կանխատեսումների ռիսկի ազդեցությունը 2013 թվականի բյուջեի վրա գնահատվում է 40 մլրդ. դրամ՝ լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ավելացման ուղղությամբ, գների, փոխարժեքի և արտաքին վարկերի չստացման գծով ենթադրությունների ռիսկերի ընդհանուր ազդեցությունը գնահատվում է 34 մլրդ. դրամ՝ լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ավելացման ուղղությամբ: Այսպիսով կանխատեսումների և ենթադրությունների ընդհանուր ռիսկը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից գնահատվում է 74 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1.6 տոկոսը:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

2.1. Ռիսկերի կառավարման հնարավորությունները

2.1.1 Ռիսկերի արագ ախտորոշում

Հնարավոր ռիսկերի արագ ախտորոշումը թույլ կտա խուսափել լրացուցիչ կորուստներից՝ արագ արձագանքման միջոցով: Ախտորոշման համար առկա են նաև համապատասխան ուղղորդող տնտեսական, ֆինանսական ցուցանիշներ և ինդեքսներ, այդ թվում տնտեսական ակտիվության ցուցանիշը, ԿԲ-ի կողմից հաշվարկվող առաջնորդող ինդեքսները և հարցման արդյունքները:

2.1.2 Ռիսկերի դրսևորման դեպքում լրացուցիչ ֆինանսավորման պահանջի ծածկման հնարավորություններ

Վերոնշյալ ռիսկերի դրսևորման արդյունքում բազային սցենարի համեմատ լրացուցիչ ֆինանսավորման պահանջը կարող է ծածկվել հետևյալ արտաքին և ներքին աղբյուրների հաշվին:

- Արտաքին աղբյուրներ

- Եվրագեսի հակաճգնաժամային ֆոնդ – Հայաստանի քվոտան նշյալ ֆոնդում, որը կազմում է 1106 մլն. ԱՄՆ դոլար, կարող է արագ օգտագործվել ճգնաժամային իրավիճակներում.
- Համաշխարհային բանկում շուրջ 70 մլն. ԱՄՆ դոլար ֆինասական միջոցներ, առանց սահմանված ծախսային ուղղությունների, նախատեսված են Հայաստանի համար և կարող են օգտագործվել ՀՀ կողմից ճգնաժամի բացասական ալիքը ՀՀ տնտեսության վրա զգալուն պես:

- Ներքին աղբյուրներ

- Լրացուցիչ պետական արժեթղթերի տեղաբաշխում, որը կզուգորդվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից արժեթղթերի երկրորդային շուկայում մասնակցության մեծացմամբ,
- 2012 թվականի տարեկան ծախսերի խնայողության հաշվին միասնական հաշվի մնացորդի օգտագործումը:

- Չեն բացառվում նաև ռիսկերի դրսևորման պարագայում պակասուրդի մեծացումը հնարավորինս զսպելու նպատակով ծախսերի գծով կասեցումներ (օրենքով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասության սահմաններում): Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության գնահատականների ռիսկերի դրսևորման պայմաններում առավելագույնը հնարավոր կլինի կասեցնել 2013 թվականին նախատեսված ծախսերի ընդհանուր ծավալի 5 տոկոսը կամ 56 մլրդ դրամ³³:

2.2. Ռիսկերի կառավարման մեխանիզմները և գործիքակազմը

Հնարավոր ռիսկերի կառավարման համար արդեն առկա են համապատասխան մեխանիզմներ և գործիքներ, ինչպես նաև դրանց կիրառման փորձ: Աշխարհում և Հայաստանում կիրառված գործիքները, այդ թվում ֆինանսական և ոչ ֆինանսական բնույթի, ներկայացվում են ստորև.

³³ Հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում 2009 թվականին հնարավոր է եղել կասեցնել բյուջեով ծրագրավորված ծախսերի ընդհանուր գումարի մոտ 5 տոկոսը (ոչ գերակա համարվող ծախսեր)

Աղյուսակ 1 Հակաճգնաժամային միջոցառումներն աշխարհում և Հայաստանում (+,- նշանակում է կիրառվել է կամ չի կիրառվել Հայաստանում)

Աշխարհում	Հայաստանում³⁴
Ֆինանսական գործիքներ	
Աջակցություն ֆինանսական կազմակերպություններին, խնդրահարույց ակտիվների ետգնմամբ	-
Աջակցություն իրական հատվածի խոշոր (համակարգաստեղծ) ընկերություններին	+
Աջակցություն իրական հատվածի ՓՄՁ-ներին	+
Գործազուրկների օգնության ծրագրի իրականացում	+
Սոցիալական բնույթի ծախսերի պահպանում	+
Ֆինանսական համակարգի կողմից տնտեսության տարբեր ոլորտներին տրվող վարկերի վերաֆինանսավորում	+
Ոչ ֆինանսական գործիքներ	
Բանկային տոկոսադրույքի իջեցում	+
Հիփոթեկային գործակալությունների ազգայնացում,	-
Պետբյուջեի միջոցներով հիմնադրամների կամ այլ ֆինանսական միջնորդների ստեղծում ֆինանսական օժանդակության նպատակով,	+
Կրթական ծրագրերի իրականացման ակտիվացում միջին խավի եկամուտները պահպանելու նպատակով,	+
Հարկային դաշտի թուլացում՝ հատկապես փոքր տնտեսարարողների համար,	+
Ներդրումների խրախուսում տարբեր օրենսդրական փոփոխություններով:	+

³⁴ - նշանակում է, որ տվյալ գործիքները Հայաստանում կիրառելի չեն, + նշանակում է, որ տվյալ գործիքները կամ առկա են կամ էլ կիրառելի են կարճ ժամկետում՝ մեխանիզմները մշակված են և փորձարկված: Աջակցություն ֆինանսական կազմակերպություններին, խնդրահարույց ակտիվների ետգնման և հիփոթեկային գործակալությունների ազգայնացման միջոցառումները Հայաստանի համար կրառելի չեն եղել քանի, որ ֆինանսական հատվածի խնդիրները կանխարգելվել են ժամանակին և ճգնաժամային ազդեցությունից էական վնասներ չեն կրել

Նշված գործիքների կիրառությունը ապացուցեցին ճգնաժամին հակազդելու արդյունավետությունը, ինչով էլ պայմանավորված կշարունակվի նույն գործիքակազմի կիրառումը հնարավոր ճգնաժամին հակազդելու համար: Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ երկիրը արդեն ունի նշված գործիքների կիրառության փորձառություն, կառավարությունը հնարավորություն կունենա առավել արագ և ժամանակին ապահովել նշված գործիքների կիրառությունը:

2.3 Ռիսկերի ազդեցության մեղմման հնարավորությունների ընդհանուր գնահատականը

Այսպիսով տնտեսական աճի նվազման ուղղությամբ ռիսկերի դրսևորման պարագայում Կառավարության քաղաքականության հիմնական նպատակադրումը պետք է լինի սոցիալական բնույթի ծախսերի կրճատման բացառումը, իսկ հնարավորության դեպքում՝ բյուջեի ծախսերի ամբողջական իրականացումը, ինչը կպահանջի սպասվող ՀՆԱ-ի նկատմամբ 0.9%-ի չափով լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում: Միաժամանակ, նպատակային մակարդակից ցածր գնաճի, փոխարժեքի և վարկերի չստացման պարագայում լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջը կկազմի ՀՆԱ-ի 0.7%-ը: Այսպիսով, ֆինանսական պահանջի ավելացման ուղղությամբ ռիսկերի ընդհանուր ազդեցությունը չի գերազանցի ՀՆԱ-ի 1.6%-ը:

Մյուս կողմից, մինչև 200 մլրդ. դրամով կամ ՀՆԱ 4,4%-ի չափով լրացուցիչ միջոցների ներգրավման պայմաններում պետական պարտքի և նախորդ տարվա ՀՆԱ-ի միջև օրենքով սահմանված առավելագույն 50% հարաբերակցությունը³⁵ չի գերազանցվի:

Շեղանքար, ՀՆԱ-ի 1.6%-ը չափով լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավումը լիովին համապատասխանում է օրենքով սահմանված բյուջետային կանոններին՝ ավելին նշանակում է, որ հնարավոր ռիսկերի ի հայտ գալու պարագայում, ըստ անհրաժեշտության կառավարությունը կարող է իրականացնել նաև լրացուցիչ ծրագրեր՝ վերոնշյալ նպատակադրումներից բացի լրացուցիչ խթաններ ստեղծելով տնտեսական ակտիվության ավելացման համար:

Ինչպես վերը նշվեց Հայաստանը ներկայումս արդեն իսկ ունի համապատասխան պայմանավորվածություններ միջազգային ֆինանսական կառույցների հետ, որոնց շրջանակներում նախատեսված միջոցները առավել քան բավարար են հնարավոր ռիսկերի ազդեցության նույնիսկ ամբողջությամբ չեզոքացման համար:

³⁵ համաձայն պետական պարտքի մասին ՀՀ օրենքի, ընդհանուր պետական պարտքը նախորդ տարվա ՀՆԱ նկատմամբ 50%-ը գերազանցելու պարագայում, պակասուրդը պետք է չգերազանցի վերջին երեք տարիների ՀՆԱ միջին մակարդակի 3%-ը: